«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի (այսուհետ՝ ԵՊՏՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....11
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....11
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....14
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....16
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....21
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....31
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....35
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....39
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....42
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....46
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....49
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....53
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....56
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....58
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....60
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....61

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը .

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը հիմնադրվել է 1932 թվականին՝ Երևանի ինդուստրիալ տեխնիկումում գործող քիմիական մասնագիտության բաժնի բազայի վրա: Այն գտնվում է Երևան քաղաքում: Քոլեջը ժամանակի ընթացքում ենթարկվել է անվանափոխությունների. 1985 թվականին վերանվանվել է Երևանի պոլիտեխնիկական տեխնիկում, իսկ 2000 թվականին՝ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ[1]: քոլեջը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջը կարևոր դերակատարություն ունի նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում, որոնք պահանջված են աշխատաշուկայում: Այն հանրապետությունում միակ ուսումնական հաստատությունն է, որը պատրաստում է «Լաբորատոր հետազոտություններ արտադրությունում» մասնագիտության լաբորանտներ, ինչը ռազմավարական նշանակություն ունի արտադրական ոլորտի համար: Քոլեջը ներկայումս իրականացնում է նախնական արհեստագործական չորս ծրագիր՝ «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Խոհարարական գործ», «Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում», «Ոսկերչություն» և միջին մասնագիտական ինը կրթական ծրագիր՝ «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում», «Սպասարկման կազմակերպում», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում», «Զբոսաշրջություն»:

Ներկայումս քոլեջում սովորում է 659 ուսանող: Շրջանավարտների հետագծի ուսումնասիրության համաձայն՝ 138 շրջանավարտներից 16-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, իսկ վերջին հինգ տարիների շրջանավարտներից 360-ը աշխատում են:

Ներկայումս քոլեջում դասավանդում են 66 դասախոս, որոնցից 60-ը ունեն բարձրագույն կրթություն, 6-ը՝ միջին մասնագիտական: Համատեղող դասախոսների թիվը 15-ն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջի 2 դասախոս գործատուներ են, իսկ շրջանավարտ-դասախոսների թիվը 3-ն է:

[1] ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿ-Ի ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԷՋ 7

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի դերակատարությունը իր կողմից իրականացվող նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում, որոնք մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում: Հարկ է ընդգծել, որ ներքին և արտաքին շահակիցները կիսում են քոլեջի ստանձնած առաքելությունը, որը նախ և առաջ տեսանելի է քոլեջի կողմից թողարկվող մասնագետների արժևորմամբ: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ քոլեջը հանրապետությունում միակ ուսումնական հաստատությունն է, որ իրականացնում է «Լաբորատոր հետազոտություններ արտադրությունում» մասնագիտությամբ լաբորանտների թողարկումը, ինչը, անշուշտ, արտադրական ոլորտի համար ունի ռազմավարական նշանակություն:

Ռազմավարական պլանավորման աշխատանքներում քոլեջի առաջընթացն է ՌԾ-ի մշակումը, որը հիմք է հանդիսանում քոլեջի գործունեության համար: Այդուհանդերձ, ռազմավարական պլանավորման մեխանիզմները դեռևս ամբողջությամբ չեն ներդրվել քոլեջի կողմից: ՌԾ-ին նախորդող յոթ տարիներին քոլեջը չի ունեցել ռազմավարական ծրագիր, ինչը խզվածք է առաջացրել գործընթացների շարունակականության միջև. վերոնշյալը թույլ չի տալիս նաև գնահատել քոլեջի առաջընթացը այդ ժամանակահատվածում: Կարևոր է արձանագրել, որ գործող 22-27 ՌԾ-ում մշակվել և վեր են հանվել քոլեջի հիմնախնդիրները ներքին շահակիցների հետ քննարկումների արդյունքում: Վերոնշյալը դրական նախադրյալներ է ստեղծում գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմների կայացման համար:

Մյուս կողմից, ՌԾ-ն որոշակի վերանայման կարիք ունի. ներկա փուլում փաստաթուղթը բովանդակորեն թույլ չի տալիս այն կիրառել որպես գործընթացների կառավարման գործիք և մեխանիզմ: Մասնավորապես անհրաժեշտ է հստակեցնել և տարանջատել ռազմավարական ուղղությունները, դրանցից բխող նպատակները և խնդիրները: Անհրաժեշտ է հստակ կապ ստեղծել ՌԾ պլան-ժամանակացույցի և ՌԾ-ի միջև, խուսափելով ինքնանպատակ պլանավորման փաստաթղթերից, ինչը տեսանելի է քոլեջի պլանավորման պրակտիկայում. մասնավորապես՝ ՌԾ-ի խնդիրների իրականացման ընթացքը և պլան-ժամանակացույցը չեն արտահայտվում քոլեջի պլանավորման այլ փաստաթղթերում և հաշվետվություններում:

Միևնույն ժամանակ, տնօրենը հետևում է ՌԾ-ի իրականացմանը, ՌԾ-ի հիմնադրույթներին քաջատեղյակ են նաև Կառավարման խորհրդի անդամները, սակայն գործընթացները փաստաթղթավորված չեն: Փորձագիտական խումբը նաև արձանագրում է, որ առկա են ՌԾ-ի հիմնախնդիրներ, որոնց ուղղությամբ հստակ քայլեր են ձեռնարկվել, սակայն

դրսևորվում է խնդիրների լուծման իրավիճակային մոտեցում, բացակայում են համակարգված կառավարչական որոշումները, տարբեր գործընթացներում չի ապահովվում ՊԻԳԲ շրջափուլը:

Կարևոր է, որ քոլեջի ռազմավարական ուղղությունները և նպատակները արտացոլվեն նաև ստորաբաժանումների աշխատանքային պլաններում: ՌԾ-ի պլան-ժամանակացույցը նույնպես վերանայման կարիք ունի. անհրաժեշտ է հստակ արտահայտել նպատակների իրականացման քայլերը, ակնկալվող արդյունքները, պատասխանատուները, իրականացնել ֆինանսատնտեսական հաշվարկներ՝ նպատակների իրատեսականության և ֆինանսական պլանավորման հետ փոխկապակցման համար: Վերոնշյալը թույլ կտա փոխկապակցել տարբեր մակարդակների պլանավորման փաստաթղթերը, հստակեցնել կառավարման գործընթացները և հասնել ՌԾ-ով նախատեսված նպատակների իրագործմանը:

Այս գործընթացներում կարևորվում է ՈՆԱ համակարգի ներդրումը և որակի մշակույթի տարածումը քոլեջում, որը պետք է իրականացվի կանոնակարգված և փաստաթղթավորված: Կարևոր է, որ քոլեջը որդեգրի տվյալահենք կառավարման սկզբունքները՝ ներդնելով որակի ապահովման հստակ մեխանիզմներ և գործիքակազմ. այստեղ փորձագիտական խումբը նկատի ունի բոլոր գործընթացների արդյունավետության օբյեկտիվ և անկողմնակալ գնահատումը և այդ արդյունքների հիման վրա բարելավման միջոցառումների պլանավորումը և իրականացումը:

Ինչ վերաբերում է մասնագիտական կրթական ծրագրերին, ապա փորձագիտական խումբը կարևորում է, որ դրանք իրականացվում են ՊԿՉ-ի համապատասխան, սակայն ապագայի համատեքստում անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել առանձին կրթական ծրագրերի մասնագրերի մշակման ուղղությամբ, ուշադրություն հատկացնելով ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձևավորմանը և դրանց փոխկապակցմանը դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հետ՝ իրականացնելով վերջնարդյունքահենք գնահատում: Այստեղ կարևորվում է գնահատման թափանցիկությունը և գնահատման չափանիշների կիրառումը՝ ինչպես մոդուլների ուսումնառության արդյունքների, այնպես էլ ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը գնահատելու համար:

Կարևորվում է նաև, որ քոլեջը ունի համապատասխան որակավորումներով ՊԴ կազմ, ովքեր համագործակցում են աշխատաշուկայի հետ, ինչպես նաև այն, որ քոլեջը իր շրջանավարտների համար հանդիսանում է գործատու: Պրակտիկ և գիտահետազոտական ոլորտից ներգրավված դասավանդողները աջակցում են քոլեջի գործընկերային կապերի զարգացմանը և լրացուցիչ կրթական ռեսուրսների ներգրավմանը՝ ապահովելով մասնագիտական վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի առկայությունը:

Անդրադառնալով մասնագիտական վերապատրաստումներին՝ նշենք, որ քոլեջը կարող է այս նպատակով նույնպես համագործակցել գործընկերների հետ:

Կարևոր է, որ վերջին ժամանակաշրջանում քոլեջի ռեսուրսները արդիականացվում են տարբեր կրթական ծրագրերի համար. այս տեսանկյունից կարիքների հստակ գնահատումը և առաջնահերթությունների սահմանումը թույլ կտա համահունչ զարգացնել բոլոր կրթական ծրագրերը: Փորձագիտական խումբը խրախուսում է նաև լրացուցիչ միջոցների ներգրավման ուղղությամբ աշխատանքների շարունակական իրականացումը:

Քոլեջում առկա է ուսանողակենտրոն միջավայր, որը նպաստում է կրթական գործընթացների արդյունավետությանը: Կարևոր է, որ քոլեջը շարունակի դիմորդների ներգրավման աշխատանքները՝ փորձելով դրանք ակտիվացնել նաև որոշ չգործող ծրագրերի համար: Կարևոր է, որ քոլեջը հաշվի է առնում ուսանողների կարիքները, սակայն կարիքների վեր հանումը անհրաժեշտ է իրականացնել ինստիտուցիոնալ կայուն մեխանիզմների

օգնությամբ: Վերոնշյալը կնպաստի թիրախային աշխատանքների իրականացմանը լրացուցիչ պարապմունքների ուղղությամբ:

Ինչ վերաբերում է հետազոտություն-ուսումնառություն փոխկապակցմանը, ապա փորձագիտական խումբը ընդգծում է իրատեսական նպատակների սահմանման կարևորությունը և հստակ մեխանիզմների ներդրումը, որը կփաստաթղթավորի հետազոտություն-ուսումնառություն կապը՝ ցույց տալով ուսանողի չափելի ձեռքբերումը: Նաև կարևոր է խրախուսման գործող մեխանիզմների ներդրումը՝ ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավման համար՝ տարանջատելով գիտական հետազոտությունը միջին մասնագիտական կրթությամբ ուսանողի հետազոտական գործունեությունից:

Զարգացման հեռանկարում կարևոր է արտաքին կապերի ուղղությամբ հստակ քաղաքականության վարումը և աշխատանքների պատասխանատվության շրջանակների հստակեցումը այս ուղղությամբ պատասխանատու անձանց միջև, ինչպես նաև արտաքին կապերի տարբերակումը: Արտաքին հաշվետվողականության մեխանիզմները շարունակական կատարելագործման կարիք ունեն: Այդ նպատակով ստեղծված կայքը կարող է նպաստել հասարակական իրազեկման մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, կարևոր է ժամանակակից գովազդային միջոցների և արշավների իրականացումը, օրինակ՝ կարճաժամկետ ծրագրերի վերաբերյալ կանոնակարգված ժամանակացույցի առկայությունը և հայտարարությունների տարածումը, ինչը կարող է խթանել մասնակիցների ներգրավումը: Քոլեջը կարող է շարունակաբար զարգացնել նաև հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման իր ներուժը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. պրակտիկ և հետազոտական ոլորտներից ներգրավված պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
2. պրակտիկաների գործնական բաղադրիչների ընդգրկումը,
3. համակարգային խնդիրների լուծմանը միտված ստորաբաժանումների թիմային աշխատանքը,
4. ուսումնական հաստատությունների հետ ձևավորված համագործակցությունը,
5. գործատուների և գիտահետազոտական կենտրոնների հետ ակտիվ համագործակցությունը,
6. աշխատաշուկայի հետ սերտ համագործակցությունը,
7. ձևավորված ուսանողակենտրոն միջավայրը,
8. ուսանողներին տրվող հետազոտական և վերլուծական բաղադրիչով առաջադրանքները,

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական պլանավորման գործիքակազմի անբավարար գործարկումը և որոշումների կայացման գործընթացում շահակիցների ներգրավման մեխանիզմների թույլ կիրարկումը,
2. տվյալահենք որոշումների կայացման համար համակարգված տեղեկատվական մեխանիզմների բացակայությունը և հաշվետվությունների հիմնականում նկարագրական բնույթը, վերլուծական բաղադրիչի պակասը,
3. որակի ապահովման համակարգի ոչ ինստիտուցիոնալ լինելը և որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին գործոնների համապարփակ ուսումնասիրության մեխանիզմների բացակայությունը,

4. բենչմարքինգի մեխանիզմների բացակայությունը և մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմների ոչ համակարգված կիրառությունը,
5. կրթական ծրագրերի և պրակտիկաների վերանայման ոչ համակարգված մոտեցումը,
6. ուսանողների հետազոտական աշխատանքի խրախուսման անհստակ մեխանիզմները,
7. ռեսուրսների բաշխման (ֆինանսական, նյութատեխնիկական) ոչ արդյունավետ կիրառությունը,
8. դասախոսների խրախուսման համակարգի բացակայությունը կամ թիրախային չլինելը,
9. միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման հստակ ռազմավարության բացակայությունը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Ձևավորել ռազմավարական ծրագրի մշակման, իրագործման և գնահատման հստակ մեխանիզմներ՝ ծրագրի նպատակների իրագործման վերահսկողության և շարունակական բարելավման համար:
2) Վերանայել ՌԾ պլան-ժամանակացույցը՝ սահմանելով հիմնախնդիրներից բխող հստակ նպատակներ, գործողություններ, դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները, ինչպես նաև պլանավորման փաստաթղթերը՝ ապահովելով դրանց ամբողջական համապատասխանեցումը ռազմավարական ծրագրի նպատակներին:
3) Մշակել չափելի ցուցանիշներ, որոնք կարտացոլեն ՌԾ իրական արդյունքները և կծառայեն որպես գնահատման օբյեկտիվ գործիքներ՝ ապահովելով ծրագրի արդյունավետ վերահսկողությունը:
4) Բարելավել և կատարելագործել կազմակերպական կառուցվածքը՝ ապահովելով ուղղահայաց և հորիզոնական կապերի արտահայտումը:
5) Վերանայել պաշտոնների անձնագրերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը իրական գործառույթներին և պատասխանատվությունների բաշխմանը:
6) Ներդնել հաստատության գործունեության վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների մեխանիզմներ և իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ:
7) Ներդնել որակի ապահովման ներքին համակարգ՝ ապահովելով դրա գործարկման համար անհրաժեշտ քաղաքականության և ընթացակարգերի մշակումը, սահմանելով աշխատանքային պլան, հստակ պատասխանատվությունների շրջանակ՝ հիմնված այդ քաղաքականության և ընթացակարգերի վրա:
8) Մշակել և ներդնել որակի ապահովման մեխանիզմներ, ներառյալ՝ տվյալների հավաքագրման, կարիքների վերհանման և գործընթացների արդյունավետության գնահատման գործիքներ, որոնք կծառայեն որպես հիմնավորված որոշումների կայացման գործիք:
9) Վերանայել հարցումների համար կիրառվող հարցարանները՝ ապահովելով օբյեկտիվ տվյալների հավաքագրում և վերլուծություն, ինչպես նաև ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ ապահովելով գործընթացների թափանցիկություն:

Որակավորումների արժանահավատ շնորհում

10) Մշակել ՄԿԾ մասնագրեր՝ ապահովելով դրանց համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրերի յուրահատկություններին և ոլորտային պահանջներին:
11) Մշակել և ներդնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումներ հաշվի առնելով յուրաքանչյուր ՄԿԾ-ից բխող մասնագիտական գործունեության առանձնահատկությունը:
12) Մշակել և ներդնել գնահատման չափանիշների (ռուբրիկների) համակարգված մոտեցումներ, հստակեցնել ուսանողներին տրվող առաջադրանքների և վերջնարդյունքների միջև կապը բարձրացնելով գնահատման գործընթացի թափանցիկությունն ու հետևողականությունը:
13) Ապահովել կրթական ծրագրերի բենչմարքինգի և մշտադիտարկման արդյունավետ իրականացում՝ համեմատելու ծրագրերը ազգային և միջազգային լավագույն փորձի հետ և բարելավման ռազմավարական ուղղություններ սահմանելու նպատակով:
14) Ստեղծել կադրերի ռեզերվ՝ դասախոսական կազմի կայունության ապահովման նպատակով:
15) Մշակել դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներ, որոնք ներառում են մասնագիտական վերապատրաստման ընդլայնված հնարավորություններ և դասավանդման արդյունավետության գնահատման մեխանիզմների բազմազանեցում:
16) Հստակ սահմանել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար դասախոսների որակավորման պահանջները:
17) Վերազինել լաբորատորիաները և արհեստանոցները, ապահովելով անվտանգության պայմանները՝ ստեղծելով համապատասխան միջավայր անվտանգ աշխատանքի համար:
18) Ներգրավել ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ՝ ապահովելով ուսումնական գործընթացի կայունությունը և ռեսուրսների շարունակական զարգացումը:
19) Ստեղծել ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ համակարգ՝ ապահովելով կառավարման գործընթացների դյուրացվածությունն ու համակարգվածությունը:
20) Ապահովել էլեկտրոնային գրադարաններին և առցանց գիտական աղբյուրներին հասանելիություն՝ նպաստելով ուսումնագիտական գործունեության արդյունավետությանը և տեղեկատվական ռեսուրսների հասանելիության ընդլայնմանը:

Երկարաժամկետ զարգացում

21) Իրականացնել շրջանավարտների հետագծի վերլուծություն ըստ մասնագիտությունների:
22) Իրականացնել ուսանողների կարիքների գնահատում և դրա արդյունքների հիման վրա կազմակերպել խորհրդատվական և լրացուցիչ ուսումնական պարապմունքներ:
23) Համակարգել հետազոտական աշխատանքների ընդգրկումը բոլոր կրթական ծրագրերում՝ ապահովելով անհատական գործնական աշխատանքների և առաջադրանքների հստակ ձևակերպված ցանկ:
24) Մշակել հետազոտական աշխատանքի գնահատման հստակ չափորոշիչներ՝ ապահովելով գնահատման համաչափությունն ու թափանցիկությունը:

25) Ախտորոշել հետազոտական գործունեության խթանման կարիքները և ձևավորել դասախոսների ու ուսանողների ներգրավվածությունը բարձրացնելու խրախուսման մեխանիզմներ։
26) Ապահովել ստորաբաժանումների ներքևից վերև, հստակ պարբերականությամբ հաշվետվողականությունը, գործընթացների համապարփակ վերահսկողությունը, կառավարման օղակների վերևից ներքև հաշվետվողականության թափանցիկությունը։
27) Մշակել և ներդնել հաշվետվությունների միասնական ձևաչափեր՝ ապահովելով փաստացի տվյալների խորքային գնահատման և վերլուծության գործիքակազմը, փոխկապակցված ռազմավարական ծրագրի կատարողական ցուցանիշների հետ։
28) Ապահովել կարճաժամկետ կրթական ծրագրերի շարունակականությունը և ակտիվացնել հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված կրթական ու սոցիալական ծրագրերը՝ խթանելով ուսանողների, գործատուների և շահակիցների մասնակցությունը մասնագիտական զարգացման և համայնքային նախաձեռնություններում։
29) Մշակել և ներդնել արտաքին կապերի և միջազգայնացման հստակ ռազմավարություն և գործողությունների պլան՝ հաշվի առնելով քոլեջի ներուժը, հստակեցնել պատասխանատուները, ժամկետներն ու ֆինանսական ռեսուրսները։
30) Կատարել աշխատանքներ լեզվաիմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ և ստեղծել հնարավորություններ ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման համար՝ նպաստելով փորձի փոխանակմանն ու զարգացմանը, միջազգային փորձի ուսումնասիրությանը։
31) Ընդլայնել հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները և ապահովել քոլեջի պաշտոնական կայքէջի եռալեզու տարբերակների հասանելիությունը՝ միջազգային համագործակցության զարգացման և առավել լայն լսարան ներգրավվելու համար։

_____

Փորձագիտական խմբի ղեկավար

Ասյա Սիմոնյան
Ապրիլի 10, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

1. **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Նաիրա Հունանյան՝** կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Մխիթար Գոշ Հայ-Ռուսական միջազգային համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Յասաման Ավագյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արևիկ Հովհաննիսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 02.02.2024թ.-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 04.10.2024թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]:

Նախնական այց

2024 թվականի դեկտեմբերի 3-ին հանդիպում է տեղի ունեցել Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ղեկավար կազմի հետ։ Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. դեկտեմբերի 10-12-ն ընկած ժամանակահատվածում։ Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, պրակտիկաների, ռեսուրսերի[4] և փաստաթղթերի[5] դիտարկում և այլն։ Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 20.03.2025թ.-ին: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն արձագանք չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 10.04.2025թ.-ին:

Համակարգող
Լիանա Ալավերդյան

Ապրիլի 10, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը սահմանված է քոլեջի 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի հիմնական առաքելությունն է՝ «գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, մասնագիտական կրթության որակի բարելավումը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին, ինչպես նաև նպաստելը կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը»: Ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի գործունեության ուղղվածությունը, հիմնախնդիրները և վերջիններիս լուծման հնարավոր ուղիները:

ԵՊՏՔ ՌԾ-ի նպատակների ներքո ներկայացված է քոլեջի գործունեության հիմնական ուղղվածությունը՝ մասնագիտական կրթությամբ որակյալ կադրերի պատրաստում, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացում, կրթական ծրագրերի համապատասխանեցում սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, միջազգային չափանիշներին համադրելի կրթական բովանդակության ապահովում, ուսումնական գործընթացի թափանցիկության, մատչելիության և հավասարության ապահովում: ՌԾ-ում առանձնացված են նաև թվով 9 հիմնախնդիրների ու դրանց լուծման ուղիների նկարագրությունը, որոնք, ըստ փորձագիտական գնահատման, իրատեսական են և համահունչ են քոլեջի կանոնադրական նպատակներին:

ՌԾ-ում ներառված է նաև պլան-ժամանակացույց, որտեղ նշված են նպատակներ և զարգացման ուղղությունները՝ ներառելով արդյունավետ կառավարման համակարգի գործարկում, նյութատեխնիկական բազայի բարեկարգում և համալրում, ուսումնամեթոդական և մանկավարժական հմտությունների կատարելագործում, կրթական և այլ ծառայությունների ընդլայնում, ինչպես նաև սոցիալական գործընկերության շրջանակի ընդլայնումը ու զարգացումը: ՌԾ-ում նպատակները, խնդիրները և հիմնախնդիրները հստակ տարանջատված չեն: Դրանք արտահայտվում են միայն պլան-ժամանակացույցում, որտեղ ներկայացված են միասնական ձևով զարգացման ուղղությունների հետ: Այդուհանդերձ, յուրաքանչյուր նպատակին համապատասխան նշված են իրականացվելիք միջոցառումը (խնդիրը), գործողությունները, ակնկալվող արդյունքները, արդյունքի վերահսկողության գնահատումը (ներկայացված է ձևը և միջոցը), ժամկետները, ներդրվող ֆինանսական միջոցները և ռիսկերը: Մասնավորապես, սահմանված գործողությունների համար բոլոր դեպքերում հստակ չեն նշված պատասխանատուներն ու ժամկետները, իսկ սահմանված ակնկալվող արդյունքները հիմնականում չափելի չեն, օրինակ՝ «քոլեջի այլընտրանքային ֆինանսական միջոցների բարելավում»: Հարկ է նշել, որ պլան-ժամանակացույցում սահմանված միջոցառումները փոխկապակցված չեն ռազմավարական ծրագրով նախատեսված հիմնախնդիրների և նրանց լուծման ուղիների հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ղեկավար կազմը որոշակիորեն հետևում է ռազմավարական պլանավորմանը, սակայն այս գործընթացը փաստաթղթավորված չէ: Մասնավորապես՝ Տնօրինական խորհրդի նիստերի ընթացքում քննարկվում են ՌԾ-ով նախատեսված հիմնախնդիրների իրականացման հարցերը, սակայն որպես այպիսին չեն ներառվում օրակարգային կամ ընթացիկ հարցերում, ինչպես նաև քննարկման արդյունքները տեսանելի չեն արձանագրություններում: ՌԾ-ում սահմանված նպատակների իրագործման համար ձեռնարկում է որոշակի քայլեր, մասնավորապես՝ մեթոդական աջակցություն սկսնակ դասախոսներին, խորհրդատվական պարապմունքներ ուսանողներին, հետազոտական աշխատանքների կազմակերպում, դասալսումների արդյունքների վերլուծություն և բարելավման առաջարկությունների ներկայացում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ 2023-2024 ուստարվա ընթացքում վերանայվել և թարմացվել են մասնագիտական ծրագրերը՝ համապատասխանեցնելով պետական չափորոշիչներին, իրականացվել է ՄԿԾ-երի վերջնարդյունքների քարտեզագրում, ինչպես նաև ակտիվացվել է գործատուների և գիտահետազոտական կենտրոնների հետ համագործակցությունը:

Քոլեջը «ԵՊՏՔ-ի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները» փաստաթղթում հստակ սահմանել է իր շահակիցների շրջանակը: Ներքին շահակիցների թվում են ուսանողները, դասախոսական կազմը և վարչական անձնակազմը, իսկ արտաքին շահակիցների կազմում ընդգրկված են դիմորդներն ու նրանց ծնողները, գործատուները, համագործակցող քոլեջները, համալսարանները և կազմակերպությունները, պետական կառավարման մարմինները, ՈԱԱԿ-ը և ԶԼՄ-ները: ՌԾ-ի մշակման հիմքում ընկած են ներքին քննարկումները, շահակիցների կարիքների վերհանումը և նախորդ 2011-2015թթ. զարգացման ծրագրի հիմնական ուղենիշերը:

ՌԾ-ի իրականացման գնահատման հստակ մեխանիզմներ այս փուլում դեռևս չեն սահմանվել: Պլան-ժամանակացույցում որպես արդյունքների վերհասկողություն և գնահատում նշվում են միայն միջոցները (օրինակ՝ մոնիթորինգ, բաց դաս, հարցում), սակայն սահմանված չեն արդյունքների գնահատման ցուցիչներ: Նպատակները հստակ և արդյունքահենք չեն. օրինակ՝ «արդյունավետ կառավարման համակարգի գործարկում»: Արդյունքների գնահատման չափանիշները ներկայացնում են միայն ձևը: Օրինակ՝ ՌԾ-ի պլան-ժամանակացույցում «դասախոսական կազմի համալրում և կառավարում՝ որակի հավատարմագրման միջազգային չափանիշներին համապատասխան» միջոցառման համար ակնկալվող արդյունքը նշված է որպես «քոլեջի կրթական մակարդակի էական բարձրացում», իսկ գնահատման արդյունքի վերահսկողությունը և գնահատումը՝ «մոնիտորինգ»: Ինչպես փաստում է քոլեջը, ՌԾ գնահատման հիմնական միջոց են հանդիսանում հաշվետվությունները, այդուհանդերձ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի հաշվետվությունները մեծամասամբ փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները հիմնականում կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունն ու սահմանված նպատակները: Շահակիցների գնահատմամբ՝ քոլեջում կարևորվում են մասնագիտությունները, ինչպիսիք են «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում», «Շրջակա միջավայրի պահպանությունը և բնական պաշարների արդյունավետ օգտագործումը»: Աշխատաշուկայում պահանջարկ ունեն նաև «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ շրջանավարտները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ռազմավարական ծրագրում հստակ ձևակերպված է քոլեջի առաքելությունը՝ ընդգծելով կրթության որակի բարելավման, մասնագետների մրցունակության բարձրացման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման նպատակները, որն ապահովում է կրթական ծրագրերի ռազմավարական ուղղվածության և աշխատաշուկայի պահանջների միջև համահունչ զարգացումը:

Դրական է, որ ՌԾ նպատակների իրագործման համար մշակվել է պլան-ժամանակացույց, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ հիմնախնդիրներից բխող նպատակները և խնդիրները լիարժեք չեն արտացոլվում ծրագրի իրագործման պլանում: Նպատակների և խնդիրների թերի պլանավորումը կարող է սահմանափակել ՌԾ-ի իրականացման արդյունավետության վերահսկողությունը: Պլանավորման փաստաթղթավորումը կարող է նպաստել ռազմավարական նպատակների իրականացման ավելի հստակ վերահսկմանը և հաշվետվողականությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ՌԾ-ում սահմանված որոշ նպատակների իրագործման ուղղությամբ ձեռնարկում է կոնկրետ քայլեր, ինչն էլ ապահովում է ռազմավարական ծրագրի գործնական իրականացումը և հաստատության զարգացման գործընթացի տեսանելիությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի ՌԾ-ն մշակվել է ներքին քննարկումների հիման վրա՝ շահակիցների կարիքների վերհանման հիմքով, ինչն ապահովում է ռազմավարական ծրագրի առավել համահունչ լինելը կրթական համայնքի ակնկալիքներին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև պլան-ժամանակացույցում արդյունքների գնահատման ցուցիչների բացակայությունը կարող է սահմանափակել ռազմավարական ծրագրի իրագործման արդյունավետության վերահսկողությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՏՔ-ի կողմից իրականացվող կրթական գործունեությունը համապատասխանում է հաստատության ռազմավարական ծրագրի նպատակներին և հիմնախնդիրներին, ապահովում է կրթական ծրագրերի համահնչությունը ՈԱՇ-ի պահանջներին և աշխատաշուկայի կարիքներին, ինչպես նաև այն, որ առկա են շահակիցների կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՔ-ն համապատասխանում է ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՊՏՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական և Տնօրենական խորհուրդների կողմից: Քոլեջի կառավարման համակարգի կատարելագործումը և դրա արդյունավետության բարձրացումը

հանդիսանում է 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրի հիմնախնդիրներից մեկը (հիմնախնդիր 9)։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհուրդը անմիջականորեն ներգրավված է քոլեջի հիմնախնդիրների լուծման գործընթացում՝ իրենց լիազորությունների շրջանակներում ցուցաբերելով որոշակի աջակցություն։ Օրինակ, Շենգավիթի ՄՄՇ տնօրենը, համագործակցելով Կարիերայի ուղղորդման պատասխանատուի հետ, աջակցում է ուսանողների աշխատանքի տեղավորման հարցերում։ ԿԽ անդամները շեշտադրում են քոլեջի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի կարևորությունը աշխատաշուկայում և տեսնում հնարավորություններ տարբեր մասնագիտություններով դուալ կրթության իրականացման համար։

Դասախոսները ներգրավված են Կառավարման և Մանկավարժական խորհուրդներում, իսկ ուսանողները՝ միայն Կառավարման խորհրդում՝ համաձայն քոլեջի կանոնադրության։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ խորհուրդներում ուսանողներն ու դասախոսները որոշակի նախաձեռնողականություն են ցուցաբերում, օրինակ՝ ուսանողները բարձրաձայնել են համակարգիչների և գույքի թարմացման խնդիրը, որը դրական լուծում է ստացել։ Դասախոսների կողմից առաջարկվել է ստեղծել նիստերի դահլիճ։ Տեղեկատվությունը հիմնականում փոխանցվում է ներքին հաղորդակցման ոչ պաշտոնական մեխանիզմներով։

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի գծապատկերը արտահայտում է հիերարխիկ գործառնական կապերը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են նաև հորիզոնական կապեր, սակայն դրանք արտահայտված չեն կազմակերպական կառուցվածքում։ Քոլեջում գործող խորհուրդների և ստորաբաժանումների գործունեությունը սահմանվում է կանոնակարգերով և պաշտոնների անձնագրերով։ Որոշ դեպքերում պաշտոնների անվանումներում և գործառույթների նկարագրություններում նկատվում են անհամապատասխանություններ, օրինակ՝ կարիերայի կենտրոնի պաշտոնի անվանումը տարբեր փաստաթղթերում ձևակերպված է տարբեր կերպ՝ որպես «Կարիերայի կենտրոնի պատասխանատու» և «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու»։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ հաստիքային աշխատողներ համատեղ կատարում են մեկից ավելի գործառույթներ։ Մասնավորապես, ուսումնական գծով փոխտնօրենը և մեթոդիստը միաժամանակ զբաղեցնում են նաև ամբիոնի վարիչի պաշտոնը, ինչպես նաև ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացների համակարգման աշխատանքներում։

Քոլեջը 2024թ.-ին ներդրել է «Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ»։ Ֆինանսների բաշխումը կատարվում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա։ 2023թ. ֆինանսատնտեսական նախահաշվի տվյալներով՝ ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատավարձեր (75,84%), ուսումնական սարքավորումների ձեռքբերում՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը (4,87%), կրթաթոշակներ (8,04%), պրակտիկաների կազմակերպում (5,14%) և տնտեսական ծախսեր (4,24%) և այլն։ 2021-2023թթ. ընթացքում նկատվել է եկամուտների աճ՝ ուսանողական վարձավճարների մուտքերի ավելացման հաշվին (11,05%-ից 20,1%)։ Ընդհանուր ծախսերի մեջ 5%-ով նվազել է աշխատավարձի ծախսը, քանի որ ուսանողների թվի աճի արդյունքում բյուջեն աճել է, և այդ համատեքստում աշխատավարձի ծախսը նվազել է տոկոսային հարաբերությամբ։

Այնուամենայնիվ, ՌԾ ֆինանսական ապահովման համար հստակ հաշվարկներ չկան, պլան-ժամանակացույցում նշված են միայն ընդհանուր ֆինանսական աղբյուրները («այլ

միջոցներ», «ներքին ռեսուրսներ» և այլն), ինչպես նաև հստակեցված չեն ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները։

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական (երկարաժամկետ) և ընթացիկ տարեկան (կարճաժամկետ) պլանավորմամբ։ Երկարաժամկետ պլանավորման հիմնական փաստաթուղթը ՌԾ-ի պլան-ժամանակացույցն է։ Քոլեջը 2024թ. ներդրել է «Ուսումնական մասի ռազմավարությունը» և «Ամբիոնների ռազմավարական ծրագիրը», որտեղ արտահայտված է ՌԾ-ում սահմանված հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների իրականացումը համապատասխան ստորաբաժանումների ներգրավմամբ։ Սակայն վերոնշյալ ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններում ներառված չեն ստորաբաժանման ՌԾ-ի նպատակները և խնդիրները։ Պլանավորման փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ստորաբաժանումների աշխատանքային պլանները տարեցտարի կրկնվում են՝ առանց էական փոփոխությունների։ Դրանցում չի արտացոլվում ՌԾ-ի հետ փոխկապակցվածությունը։ Բացի այդ, աշխատանքային պլաններում վերջնարդյունքները հստակ սահմանված չեն. դրանք հիմնականում ամփոփվում են «կատարված է» ձևակերպմամբ։

Քոլեջում առաքելության և նպատակների իրականացման վերահսկողության և մշտադիտարկման հիմնական գործիքը հաշվետվություններն են։ Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ ստորաբաժանումների հաշվետվությունները մեծամասամբ նկարագրական բնույթ ունեն (օրինակ՝ կարիերայի ուղղորդման պատասխանատուի, մեթոդիստի, ամբիոնների հաշվետվությունները), իսկ վերլուծական բաղադրիչը թույլ է արտահայտված։ Հաշվետվություններն առավելապես կենտրոնանում են քանակական տվյալների ամփոփման վրա։ Տնօրենի տարեկան հաշվետվությունը կազմվում է ուսումնական գծով փոխտնօրենի հաշվետվության հիման վրա, սակայն ներկայացվող վերլուծությունները տարեցտարի կրկնվում են՝ առանց էական փոփոխությունների։ Օրինակ, ուսումնամեթոդական աշխատանքների ամփոփման մեջ ամբիոններից շարունակաբար ընդգծվում են նույն առաջարկությունները, ինչպիսիք են՝ «մեթոդական զեկուցումները դարձնել ավելի հաճախ, ներառել դասախոսների մեծամասնությանը» կամ «խորհրդատվական պարապմունքներում ներառել արդիական թեմաներ»։ Նմանատիպ կրկնությունները պահպանվել են 2021-2022, 2022-2023, 2023-2024 ուստարիների հաշվետվություններում։

Քոլեջը դեռևս չի իրականացրել իր գործունեության վրա ազդող գործոնների համապարփակ ուսումնասիրություն։ 2015-2022 թվականների ընթացքում քոլեջը չի ունեցել Ռազմավարական ծրագիր, մինչդեռ մինչ 2015 թվականը գործել է 2011-2015թթ. Զարգացման ծրագիրը։ Հիմնախնդիրների վեր հանումն իրականացվել է հիմնականում ներքին շահակիցների հետ քննարկումների արդյունքում։ Մինչև հավատարմագրման գործընթացը քոլեջը իր խնդիրները վերհանել է ոչ ֆորմալ միջոցներով։ Ինքնավերլուծության իրականացման շրջանակներում նախաձեռնվել և կատարվել են մի շարք հարցումներ, որոնց միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ ուսանողների բավարարվածությունը մասնագիտական կրթական ծրագրերից, իրականացվող հետազոտական աշխատանքներից, ռեսուրսներից և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքների հիման վրա քոլեջը փորձում է ընթացս բարելավումներ իրականացնել, օրինակ կատարելագործել ուսումնական միջավայրը։ Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն չի իրականացվում, սակայն արտաքին շահակիցների հետ համագործակցություն և հետադարձ կապ որոշակիորեն ապահովում է կարիերայի կենտրոնը։

Քոլեջը դեռևս չունի մշակված մեխանիզմներ՝ ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար: ՌԾ-ի պլան-ժամանակացույցում արտահայտված ռիսկերը ձևավորվել են հիմնականում ներքին քննարկումների արդյունքում, սակայն ռազմավարական մակարդակում դրանք համակարգված ձևով չեն սահմանվել:

Քոլեջում ՊԻԳԲ սկզբունքը դեռևս ամբողջապես չեն ներդրվել բոլոր գործընթացներում: 2024 թվականին քոլեջում ներդրվել են մի շարք նոր փաստաթղթեր, սակայն դրանց նպատակահարմարության և գործնական կիրառելիության համապարփակ ուսումնասիրություն չի իրականացվել (օրինակ՝ «Որակի ապահովման քաղաքականությունը»): Բացի այդ, փաստաթղթային վարչարարության մեջ նկատվում են թերացումներ, այդ թվում՝ իրավական ուժ չունեցող փաստաթղթերի շրջանառություն (օրինակ՝ կան փաստաթղթեր և/կամ հաշվետվություններ, որոնք հաստատված չեն քոլեջի ղեկավարության կողմից): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջին առանձին գործընթացներում հաջողվել է որոշակիորեն կիրառել ՊԻԳԲ մոտեցումը: Օրինակ՝ ռեսուրսների բարելավման շրջանակներում իրականացվել է կարիքների գնահատում, որի հիման վրա ստացվել և կիրարկվել է դրամաշնորհային աջակցություն՝ ուսումնական գույքի ձեռքբերման նպատակով: Ներկայումս նախատեսվում է նոր դրամաշնորհային ծրագիր: Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի հիմնական գործընթացները դեռևս գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում:

ՄՈՒՀ-ում տեղեկատվության հավաքագրման ինստիտուցիոնալ մեխանիզմներ առկա չեն: Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը իրականացվում են հատվածային մոտեցմամբ՝ առանց միասնական մեթոդաբանության և մշտադիտարկման գործիքակազմի: Օրինակ՝ քոլեջն ունի շրջանավարտների բազա, սակայն շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունը համակարգված և ամբողջական կերպով չի իրականացվում: Բացի այդ, քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են հաստատության առօրյա գործունեության հետ կապված իրադարձությունները: 2024թ.-ին ստեղծվել և գործարկվել է պաշտոնական կայքէջ, որտեղ տեղադրված են որոշ հայտարարություններ՝ ներառյալ թափուր աշխատատեղերի մասին տեղեկություններ, դիմորդների համար նախատեսված տեղեկատվություն և մի շարք ներքին կարգավորող փաստաթղթեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կայքէջը դեռևս համալրման փուլում է, և թեև առկա են որոշակի տվյալներ ՄԿԾ-ների և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, տեղեկատվությունը մասնակի է: Կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար ամբողջապես ապահովված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, կարևոր է քոլեջի Կառավարման խորհուրդը որոշակիորեն ներգրավված է քոլեջի ռազմավարական խնդիրներ լուծմանը: Քոլեջի խորհուրդների գործունեությունը և դրանցում ներքին շահակիցների ներգրավվածությունը ապահովում է կառավարման կառուցվածքի բազմաշերտությունը: Ուսանողները և դասախոսները որոշակի դերակատարություն ունեն Կառավարման և Մանկավարժական խորհուրդներում, ինչը նպաստում է ներքին շահակիցների ձայնի լսելիությանը: Այդուհանդերձ, շահակիցների իրազեկման գործուն մեխանիզմների ներդրումը, հիմնված վերևից նեքև հաշվետվողականության ապահովման վրա կնպաստի կառավարման գործընթացների թափանցիկության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում սահմանված են պաշտոնների անձնագրեր և կանոնակարգեր, ինչը ձևավորում է կազմակերպական

գործունեության հիմքը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հստակեցված պաշտոնի նկարագրությունները՝ հիմնված գործառնական կապերի և պաշտոնեական գործառույթների իրատեսական բաշխման վրա, ինչպես նաև միասնական տերմինաբանության կիրարկումը կնպաստեն կանոնակարգող փաստաթղթերի համահնչեցմանը և կառավարման գործընթացների լավարկմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ներդրել է «Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ», որը դրական նախադրյալ է ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետության բարձրացման համար: Այնուամենայնիվ, ՌԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվարկների բացակայությունը սահմանափակում է ռազմավարական նպատակներին հասնելու հնարավորությունների կանխատեսելիությունը: ՌԾ նպատակների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական հաշվարկները և հստակեցումը ըստ ՌԾ գործողությունների կնպաստի ֆինանսական մարդկային և նյութական ռեսուրսների կայուն կառավարմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում ռազմավարական և ընթացիկ պլանավորման առկայությունը, որը կարող է ապահովել հաստատության համակարգված զարգացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ ստորաբաժանումների աշխատանքային պլանները չունեն զարգացման և բարելավման դինամիկա: Տարեցտարի միօրինակ պլանավորումը՝ առանց ռազմավարական ծրագրի հետ հստակ կապի, նվազեցնում է ՌԾ-ի իրականացման արդյունավետությունը և սահմանափակում բարելավման հնարավորությունները: Կառավարման տարբեր մակարդակներում պլանավորման փաստաթղթերի միասնական և փոխկապակցված մշակումը, դրանց ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխանեցումը և վերջնարդյունքների հստակ ձևակերպումը կնպաստի գործունեության արդյունավետ կառավարմանը և քոլեջի զարգացմանն ուղղված քայլերի առավել նպատակային իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի ստորաբաժանումները պարբերաբար ներկայացնում են հաշվետվություններ, ինչը ապահովում է կառավարման որոշումների կայացման համար որոշակի տեղեկատվական հիմք, սակայն միասնական մոտեցումների բացակայությունը և նկարագրական բնույթի հաշվետվությունները խոչընդոտում են գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության լիարժեք հավաքագրմանը: Վերլուծական հաշվետվությունների մշակումը կնպաստի կառավարման համակարգի արդյունավետության գնահատմանը և գործընթացների բարելավմանը:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքը ներառում է հիերարխիկ կառավարման մոդել, որը ձևավորում է որոշումների կայացման ուղղահայաց կառուցվածք, սակայն պրակտիկայում գործող հորիզոնական կապերը արտացոլված չեն փաստաթղթային հենքում, որը հեռանկարում կարող է հանգեցնել կամայական և անկանխատեսելի ներքին համագործակցության կամ վերջինիս բացակայությանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերի համակարգումը և ամրագրումը պաշտոնական փաստաթղթերում, կնպաստի ստորաբաժանումների միջև գործառույթների ավելի հստակ բաշխմանը և համագործակցության բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը նախաձեռնել է ներքին խնդիրների վերհանման գործընթացներ՝ հարցումների միջոցով, ինչը թույլ է տալիս ստանալ ուսանողների և դասախոսների հետադարձ կապը: Միևնույն ժամանակ կարևոր է քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների համապարփակ ուսումնասիրությունը, այս նպատակով մեխանիզմների և գործիքակազմի ներդնումը

կնպաստի ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրմանը և հիմնավոր որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը վերջին տարիներին սկսել է որոշ գործընթացներում կիրառել ՊԻԳԲ սկզբունքները, սակայն որակի ապահովման համակարգի բացակայությունը հանգեցրել է ինստիտուցիոնալ մակարդակում ՊԻԳԲ-ի հատվածային կիրառությանը, ինչը խոչընդոտում է ՄՈՒՀ-ի գործընթացների շարունակական բարելավմանը: Այս սկզբունքների լայնամասշտաբ կիրառումը կառավարման գործընթացներում կնպաստի հաստատության գործունեության որակի բարձրացմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՏՔ-ում կառավարման համակարգը մեծամասամբ արտահայտում է ուղղահայաց կապերը, պաշտոնների անձնագրերը լիովին չեն արտահայտում հիմնական գործառութային պարտականությունները, առկա է հաստիքային աշխատողների գործառութային գերբեռնվածություն, ռազմավարական նպատակների իրագործման համար ֆինանսական պլանավորումը հստակեցված չէ, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերը փոխկապակցված չեն, առկա չեն ներքին և արտաքին գործոնների համապարփակ ուսումնասիրության մեխանիզմներ, կառավարման գործընթացներում ՊԻԳԲ սկզբունքները դեռևս ամբողջությամբ չեն կիրառվում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՔ-ը չի բավարարում ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՊՏՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր:

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը ներկայումս իրականացնում է նախնական արհեստագործական չորս ծրագիր՝ «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Խոհարարական գործ», «Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում», «Ոսկերչություն» և միջին մասնագիտական ինը կրթական ծրագիր՝ «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում», «Սպասարկման կազմակերպում», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում», «Զբոսաշրջություն»: Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ քոլեջը հետևողականորեն ընդլայնում է իր կրթական ծրագրերի շրջանակը՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին: Այս նպատակով 2017-2018 ուսումնական տարում ներդրվել են նոր մասնագիտություններ, այդ թվում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Զբոսաշրջություն»: Վերջին տարիներին ներդրվել է նաև «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտությունը, որը տրամադրում է

«Տեխնիկ-էկոլոգ» որակավորում, որի ներդրումը պայմանավորված է եղել արտաքին շահակիցների արձագանքներով: Կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ հաջորդ կարևոր քայլը եղել է 2023-2024 ուսումնական տարում «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» նախնական մասնագիտական ծրագրի ներդրումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» և «Ոսկերչություն» մասնագիտությունների համար նախատեսվում է կիրառել դուալ կրթության ձևաչափ, սակայն այս գործընթացը դեռևս գտնվում է պլանավորման փուլում:

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը ներգրավված է պետական կրթական չափորոշիչների մշակման և վերանայման գործընթացներում՝ օրինակ, 2022թ. «Հաշվապահական հաշվառում», իսկ 2023թ.-ին «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» ծրագրերի ՊԿՉ-ների վերանայմանը: Կրթական ծրագրերը իրականացնելիս քոլեջը առաջնորդվում է ՊԿՉ-ներով, ՄԿԾ մասնագրեր և առանձին ծրագրային վերջնարդյունքներ մշակված չեն: ԻՎ իրականացման ընթացքում քոլեջը հիմնվելով ՊԿՉ-ում միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտին ներկայացվող պահանջների և այլ դրույթների վրա առանձնացրել է թվով 13 ուսումնառության արդյունք, որոնք նույնական են բոլոր կրթական ծրագրերի համար: Քոլեջի կողմից առանձնացված ՄԿԾ ուսումնառության արդյունքները ընդհանրական են և չեն արտահայտում մասնագիտական կրթական ծրագրերի առանձնահատկությունները և մասնագիտական տարբերությունները օրինակ՝ «Ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ»: Վերոնշյալ արդյունքները քարտեզագրվել են փորձագիտական խմբի կողմից դիտարկվող «Հաշվապահական հաշվառում», «Դեղագործություն» և «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» ՄԿԾ-ների ուսումնական պլանների առարկաների / մոդուլների հետ:

Քոլեջը վերանայել է մոդուլային ուսումնական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք փոփոխված պետական կրթական չափորոշիչներին, ներառյալ «Հաշվապահական հաշվառում» և այլ մասնագիտություններ: Կրթական ծրագրերում փոփոխությունները հիմնականում նախաձեռնվում են դասախոսների կողմից և քննարկվում ամբիոնի նիստերում: Այս գործընթացի շրջանակում, մասնավորապես, ուշադրություն է դարձվել մոդուլների հաջորդականության ապահովման խնդիրներին:

Քոլեջն իրականացրել է ուսումնական պլանների ընտրովի առարակների բազմազանեցում: Մասնավորապես, «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրում ներառվել են «Աղետների բժշկություն» որպես ընտրովի առարկա և «Կլինիկական պաթոլոգիա», որը ներդրվել է պահուստային ժամերի հաշվին: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության համար ներդրվել է «Ձեռներեցություն», իսկ պահուստային ժամերը տրամադրվել են «Քաղպաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկային: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար ներդրվել է «Իմպլանտներ», իսկ «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողների համար՝ «Համաշխարհային խոհանոց» ընտրովի առարկան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ ընտրովի առարկաներ ներդրվել են գործատու ոլորտից ներգրավված դասախոսների առաջարկությամբ՝ նպատակ ունենալով համադրել ուսուցումը իրական աշխատանքային միջավայրում առաջացող պահանջների հետ: Այնուամենայնիվ, «Հաշվապահական հաշվառում» և «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտություններում դեռ չեն ներմուծվել մասնագիտական ընտրովի առարկաներ:

Ուսումնական պլաններում ներառված են պրակտիկայի հետևյալ ձևերը՝ ուսումնական, արտադրական, նախաավարտական և/կամ նախադիպլոմային: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները պրակտիկան անցնում են ԵՊՏՔ հաշվապահությունում, «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամում, «Էկոպրոֆ» ՍՊԸ-ում, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում, «Շողերսոֆթ» ՍՊԸ-ում: «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները պրակտիկա են անցնում «Անի Տեր-Վարդանյան» ԱՁ-ում, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ում, «Թմիլի Ֆարմ» ՍՊԸ-ում, «Սարգսյան Գայանե» ԱՁ-ում և այլ դեղատներում: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության ուսանողները պրակտիկա են անցնում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում: Ուսանողները հնարավորություն ունեն ըստ դիմումի պրակտիկան անցնելու իրենց բնակության վայրին մոտ կազմակերպություններում: Հարկ է նշել, որ 2023 թվականին պրակտիկայի ծրագրերը վերանայվել են՝ գործնական բաղադրիչների տեսակարար կշիռն ավելացնելու նպատակով:

Ըստ վերանայված ծրագրերի՝ «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները անցնում են 3 շաբաթ ուսումնական պրակտիկա, 11 շաբաթ մասնագիտական արտադրական պրակտիկա և 6 շաբաթ նախաավարտական պրակտիկա: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության ուսումնական պրակտիկան առանց տեսական ուսուցման տևում է 1 շաբաթ, արտադրական պրակտիկան՝ 12 շաբաթ, իսկ նախաավարտականը՝ 3 շաբաթ: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողների համար նախատեսված է 14 շաբաթ արտադրական պրակտիկա և 7 շաբաթ նախաավարտական պրակտիկա: Պրակտիկայի ծրագրերում ներկայացված են համապատասխան թեմաները և դրանց ընդհանուր ժամաքանակները, բացառությամբ որոշ ծրագրերի, որտեղ բացակայում է թեմաների և ժամերի հստակ բաշխումը: Մասնավորապես, «Դեղագործություն» և «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտությունների պրակտիկայի ծրագրերում թեմաները բաժանված են բազմաթիվ ենթաթեմաների, սակայն ժամային բաշխում չի իրականացվել (օրինակ՝ «Ծանոթացում դեղերին՝ ըստ դեղաբանական խմբերի» թեմային հատկացվել է 184 ժամ, այն ներառում է 24 ենթաթեմա, սակայն դրանց համար առանձին ժամաքանակներ չեն սահմանվել):

Քոլեջում դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում սահմանված չէ, սակայն դասախոսները կիրառում են բազմազան մեթոդներ, այդ թվում՝ խմբային աշխատանքներ, գործնական առաջադրանքներ, լաբորատոր փորձարկումներ, դեպքերի և իրավիճակների ուսումնասիրություն և շնորհանդեսներ: Մեթոդների ընտրությունը հիմնականում կատարվում է դասախոսների կողմից՝ մեթոդիստի խորհրդատվությամբ: Փորձագիտական այցի արդյունքում պարզվել է, որ ուսանողների կարիքների հիման վրա որոշ ծրագրերում վերանայվել են դասավանդման մեթոդները: Մասնավորապես, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները կարևորել են համագործակցային և խմբային աշխատանքների կիրառումը՝ ավանդական դասախոսության գերակշռումը նվազեցնելու համար: «Դեղագործություն» և «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտությունների համար բարելավվել են լաբորատոր աշխատանքները, որոնք դարձել են ավելի ինտենսիվ՝ ներառելով մանրադիտում և գործնական փորձարկումներ: Դասավանդման մեթոդների վերանայման հիմքում ընկած են դասալսումների արդյունքները: Ընդհանուր առմամբ, ուսումնական գործընթացում կիրառվում են տեսասահիկների պատրաստում, անհատական առաջադրանքներ, ռեֆերատներ և ինքնուրույն հանձնարարություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը խթանում է ուսանողների ստեղծագործական, վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացումը: «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակում ուսանողները լաբորատոր փորձարկումների միջոցով ձեռք են բերում գործնական հմտություններ, այդ թվում՝ դեղորայքային լուծույթների պատրաստում և քիմիական անալիզների իրականացում: «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրում ուսանողները կատարում են հաշվապահական հաշվարկներ, վերլուծում ֆինանսական փաստաթղթեր, ինչպես նաև պրակտիկայի ընթացքում ուսումնասիրում ՀԾ ծրագիրը:

2024թ. թվականին քոլեջը ներդրել է «Հետազոտական աշխատանքների ռազմավարությունը», որտեղ նշվում է, որ հետազոտական աշխատանքները (հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ, ռեֆերատներ կամ ինքնուրույն անհատական աշխատանքներ) հիմնականում ներառված են առարկաների տեսական և գործնական պարապմունքներում, սակայն այս դրույթը դեռևս ամբողջովին չի իրագործվում: Մոդուլային ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում չեն ներառում ուսանողների համար նախատեսված հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ, ռեֆերատներ կամ ինքնուրույն անհատական աշխատանքներ: Թեև հետազոտական կարողությունների զարգացման նպատակով ուսանողներին տրվում են ռեֆերատներ, նախագծային աշխատանքներ և տվյալների վերլուծության առաջադրանքներ, սակայն գործընթացը ինստիտուցիոնալ չէ՝ դեռևս ներդրված չեն հետազոտական բնույթի աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն կանոնակարգող մեխանիզմներ:

Քոլեջում գործում է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ» հաստատված 2024թ.: Համաձայն կարգի մոդուլների գնահատման արդյունքում ընդունվում է վերջնական որոշում՝ «անցել է» կամ «չի անցել»: Ինչպես նաև գնահատման գործընթացների շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքը կարող է ստանալ որոշակի միավոր ըստ նախապես սահմանված 10 միավորային սանդղակի: Մոդուլային ծրագրերում ներկայացված է ուսումնառության արդյունքների գնահատման ձևը, որը ներառում է թեստեր, գրավոր և գործնական առաջադրանքներ: Գնահատման թերթիկների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում ուսումնառության արդյունքների գնահատման համար առանձին բանավոր հարցեր չեն սահմանվում, սակայն գործնական առաջադրանքները լայնորեն կիրառվում են: Մասնագիտական մոդուլների գնահատումը յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ամփոփվում է քննությամբ, որի հարցաշարերը ներառում են թե՛ տեսական գիտելիքների, թե՛ գործնական հմտությունների ստուգում: Այս մոտեցումը կիրառվում է բոլոր մասնագիտությունների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները գնահատման գործընթացում առաջնահերթ ուշադրություն են դարձնում ուսանողների մասնագիտական պատրաստվածությանը, ձեռք բերած հմտություններին և ինքնուրույն աշխատելու կարողությանը: Այնուամենայնիվ, ընթացիկ գնահատման համար հստակ չափանիշներ (ռուբրիկներ) դեռևս սահմանված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հնարավորություն ունեն վերանայելու իրենց գնահատականները դասախոսի հետ քննարկման միջոցով, սակայն գնահատականների բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել: Հարկ է նշել, որ պրակտիկայի օրագրերում ներկայացված են ուսանողների աշխատանքային գործունեության նկարագրությունները ըստ թեմաների և հատկացված ժամերի, օրագրում նշվում է պրակտիկայի ընդհանուր գնահատականը, սակայն պրակտիկայի գնահատման համար հստակ չափանիշներ դեռևս սահմանված չեն:

«Ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները և շրջանավարտների ատեստավորման կարգը» փաստաթուղթը սահմանում է պետական որակավորման

քննությունների կազմակերպման և անցկացման կարգը: Ավարտական քննության հարցաշարը կազմվում է ուսումնական պլանով նախատեսված ընդհանուր և մասնագիտական մոդուլների շրջանակում: Հարցաշարերում ներառվում են թե՛ տեսական, թե՛ գործնական բաղադրիչներ, սակայն հարցերի կշիռները հստակեցված չեն: Քոլեջի որոշ կրթական ծրագրերում պետական որակավորման քննությունը իրականացվում է ավարտական աշխատանքի պաշտպանության ձևաչափով, օրինակ՝ «Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ծրագրերում: Ուսումնասիրությունները վկայում են, որ ավարտական աշխատանքների կատարման պահանջները հիմնականում պահպանվում են՝ ներառելով արդիական վերլուծություններ, փորձարարական հիմքեր, եզրակացություններ և գրականության ցանկ: Այնուամենայնիվ, առկա են թե՛ ձեռագիր, թե՛ տպագիր աշխատանքներ, որոնցում երբեմն չեն պահպանվում հղումները կամ բացակայում է օգտագործված գրականության ցանկը: Ավարտական աշխատանքները գրախոսվում են տվյալ ոլորտի մասնագետների՝ արտաքին շահակիցների կողմից:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացվել, ինչպես նաև բացակայում են կրթական ծրագրերի մշտադիտարկման և համեմատական վերլուծության (բենչմարքինգի) հստակ մեխանիզմներ: Կրթական ծրագրերի իրականացման վերահսկումն իրականացվում է հիմնականում դասալսումների միջոցով, որոնք կազմակերպվում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի, մեթոդիստի և ամբիոնի վարիչների կողմից: Բացի այդ, ՄՈՒՀ-ում կիրառվում են նաև փոխադարձ դասալսումներ՝ դասավանդման որակի գնահատման նպատակով: Կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն ստացվում է նաև պետական որակավորման հանձնաժողովների կարծիքների հիման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանձնաժողովների արձագանքներում ներառված են առաջարկություններ կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, «Դեղագործություն» մասնագիտության դեպքում նշվել է, որ ծրագիրը անհրաժեշտ է վերանայել, պարզեցնել և առավել համապատասխանեցնել միջին որակավորում ստացող մասնագետի կարողություններին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը շարունակաբար զարգացնում է իր նախնական և միջին մասնագիտական կրթական ծարգրերը: Դրական է նաև, որ նոր մասնագիտություններով կրթական ծրագրերը ներդրվում են հաշվի անելով աշխատաշուկայի կարիքները, ինչը շեշտադրում է քոլեջի գործունեության համահունչ լինելը իր որդեգրած առաքելությանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև աշխատաշուկայի կարիքների և ժամանակակից պահանջների արտահայտումը նաև ՄԿԾ-ների վերջնարդյունքներում: Տվյալ մասնագիտական ոլորտի առանձնահատկությունները արտահայտող ծրագրային վերջնարդյունքների մշակումը առաջիկայում կնպաստի ուսուցման բովանդակային նպատակների առավելագույն հստակեցմանը և ուսանողների ձեռքբերված հմտությունների արդյունավետ գնահատմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի դասախոսական կազմը նաև ներգրավված է ՊԿՉ-ների մշակման աշխատանքներում, ինչը դրական նախադրյալ է ծրագրերի շարունակական լավարկման համար: Դրական է նաև որ վերանայվել են մոդուլային ուսումնական ծրագրերը՝ ինչպես դասախոսների առաջարկությունների հաշվառմամբ, այնպես էլ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ինչն ապահովում է ոլորտի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստումը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է կատարել մշտադիտարկում՝ վերանայված ծրագրերի ազդեցության վերաբերյալ և ապահովել, որ դրանց կիրառումը լինի համակարգված և հետևողական:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ իրականացրել է ուսումնական պլանների ընտրովի առարկաների բազմազանեցում՝ ներառելով մասնագիտական հմտությունները զարգացնող նոր դասընթացներ: Վերոնշյալը ապահովում է ուսանողների ուսումնառության անհատականացման հնարավորությունը և նրանց մասնագիտական գիտելիքների խորացումը: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է շարունակել այս ուղղությունը և աշխատաշուկայի կարիքների հիման վրա ընդլայնել մասնագիտական ընտրովի առարկաների հնարավորությունները՝ հատկապես այն մասնագիտությունների համար, որոնցում դեռևս նման զարգացում չի իրականացվել:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ակտիվորեն համագործակցում է գործատուների հետ՝ ուսանողների պրակտիկաները կազմակերպելու նպատակով, ինչն ապահովում է ուսանողների գործնական հմտությունների զարգացումը և նրանց մասնագիտական պատրաստվածության բարձրացումը: Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլինի ներդնել պրակտիկայի ծրագրերի հստակ չափանիշներ, որոնք կապահովեն պրակտիկաների արդյունավետությունը և նրանց համապատասխանությունը ուսումնական նպատակներին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասավանդման մեթոդների արդիականացումը հիմնված ուսանողների կրթական կարիքների բացահայտման վրա, ինչը նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի բարելավմանը: Այդուհանդերձ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումների մշակումը՝ հիմնված ուսանողների կրթական կարիքների և նոր մոտեցումների վրա, ինչը թույլ կտա համակարգել և հստակեցնել ուսումնառության արդյունքների ձեռքբերումը՝ ապահովելով կրթական գործընթացի հետևողական և կառուցվածքային զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է գնահատման հաստատված կարգ, և յուրաքանչյուր ուսումնառության արդյունքը գնահատվում է տարբեր գործնական առաջադրանքների միջոցով, ինչն ապահովում է ուսանողների հմտությունների բազմակողմանի ստուգումը: Միևնույն ժամանակ, նպատակահարմար է գնահատման տարբեր մակարդակներում մշակել և ներդնել հստակ գնահատման չափանիշներ (ռուբրիկներ), որոնք կապահովեն գնահատման թափանցիկությունը և ուսանողների համար հետադարձ կապի տրամադրումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ավարտական աշխատանքները գրախոսվում են ոլորտի մասնագետների կողմից, ինչն ապահովում է ավարտական աշխատանքների որակի վերահսկումը և մասնագիտական համապատասխանությունը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ ավարտական աշխատանքների ձևավորման և կատարման պահանջների սահմանումը ու վերահսկողությունը՝ ներառյալ աղբյուրների հստակ հղումները և ձևավորման միասնական չափորոշիչները, կարող են նպաստել մասնագիտական ստանդարտներին համապատասխանությանը և ուսանողների գիտելիքների ամրապնդմանը՝ ապահովելով նրանց պրոֆեսիոնալ պատրաստվածությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը տարբեր մեխանիզմներով փորձում է վերահսկել և մշտադիտարկել ՄԿԾ-ների իրականացման ընթացքը, սակայն համապարփակ մեխանիզմների բացակայությունը թույլ չի տալիս ամբողջացնել գործընթացները և ամփոփել արդյունքները: Մշտադիտարկման արդյունքում քոլեջը մասնակի բարելավումներ է իրականացրել դասավանդման մեթոդների ընտրության հարցում, սակայն ծրագրային բարելավումների համար խնդիրներ դեռևս չեն վեր հանվել: Այս տեսանկյունից նպատակահարմար կլինի նաև մշակել կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման մեխանիզմներ, որոնք թույլ կտան քոլեջին համեմատական վերլուծություն իրականացնել իր

ծրագրերը ազգային և միջազգային լավագույն փորձի հետ՝ բարձրացնելու ծրագրերի մրցունակությունն ու որակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը հետևողականորեն ընդլայնում է իր նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակը՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին, ներգրավված է պետական կրթական չափորոշիչների մշակման և վերանայման գործընթացներում, բարելավում է մոդուլային ուսումնական ծրագրերը, իրականացնում է ուսումնական պլանների ընտրովի առարկաների բազմազանեցում, ակտիվորեն համագործակցում է գործատուների հետ պրակտիկաների կազմակերպման համար, կիրառում է դասավանդման մեթոդների արդիականացման մոտեցումներ՝ հիմնված ուսանողների կրթական կարիքների վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանի 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջում իրականացվում են ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված տարբեր միջոցառումներ՝ ներառյալ բաց դռների օրերը և խորհրդատվությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում, ներգրավված են կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրենը և ՈՒԽ-ն: Թեև քոլեջի կողմից դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում չի իրականացվում:

ԵՊՏՔ-ն ընդունելություն իրականացնում է «Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգին համապատասխան: Քոլեջը ընդունելության քննություն է կազմակերպում միայն «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների շրջանակներում՝ «կենսաբանություն» առարկայից: Մյուս մասնագիտությունների դեպքում ընդունելությունը տեղի է ունենում առանց քննությունների՝ ավարտական վկայականի գնահատականների հիման վրա:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում, հատկապես «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» և «Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում» մասնագիտությունների գծով: Քոլեջի ներկայացուցիչների կարծիքով՝ այս աճը պայմանավորված է կառավարության կողմից գերակա ճանաչված մասնագիտություններին տրվող կրթաթոշակով: Ըստ քոլեջի ինքնավերլուծության, 2024-2025 ուսումնական տարում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 659 ուսանող:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների և ազատումների հիմնական պատճառներ են հանդիսացել անհարգելի բացակայությունները, այլ ուսումնական հաստատություններ տեղափոխվելը, այլ երկիր տեղափոխվելը և որոշ դեպքերում վարձավճարի չվճարելը: Հեռացումների քանակը

նվազեցնելու նպատակով քոլեջը նախաձեռնել է ուսանողների և նրանց ծնողների տեղեկացում բացակայությունների սահմանաչափի գերազանցման մասին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է ՈւԽ-ի, կուրսղեկների և կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրենի միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում ՈւԽ-ի կողմից կազմակերպած բանավոր հարցումները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տեսանելի է կապը վեր հանված կարիքների և բարելավման նախատեսված գործողությունների միջև: Օրինակ, պատմության դասընթացը նախապես անցկացվել է ավանդական դասախոսության ձևաչափով, սակայն հետագայում դասը կազմակերպվել է սահիկաշարերի կիրառմամբ:

Ուսանողների կարիքների վեր հանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈւԽ-ն: Մասնավորապես՝ ՈւԽ-ի կողմից վեր հանվել է էլեկտրոնային գրատախտակների սակավության և ուսումնական գույքի թարմացման հետ կապված խնդիրը:

Քոլեջում գործում է առաջարկությունների և բողոքների արկղ՝ ուսանողների կարիքները վերհանելու և խնդիրներին արձագանքելու նպատակով: Այն բացվում է յուրաքանչյուր երկու ամիսը մեկ՝ կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի և ՈւԽ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբեմն առաջացող խնդիրները պահանջում են ավելի արագ արձագանք, ուստի քոլեջը նախատեսում է արկղը բացել ամսական կտրվածքով՝ նպատակ ունենալով ապահովել օպերատիվ արձագանքման հնարավորություն: Արկղի կիրառման արդյունքում բացահայտվել են որոշ ուսումնական գործընթացի խնդիրներ, մասնավորապես՝ դասավանդման մեթոդների ճիշտ կիրառման հարցը, որը հետագա դասալսումների և քննարկումների արդյունքում լուծվել է:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը: Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների 15.5%-ը բավարարված են խոհրդատվական պարապմունքներից: Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ազատորեն կարող են դիմել վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, սակայն քոլեջում չկա վարչական աշխատակազմին դիմելու համար սահմանված հստակ ժամանակացույց: Միևնույն ժամանակ, քոլեջը իրականացրել է հարցումներ՝ գնահատելու վարչական ծառայություններից ուսանողների բավարարվածության մակարդակը, որի արդյունքների համաձայն՝ ուսանողների 44%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 40%-ը բավարարված է դրանցից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային աջակցելու նպատակով քոլեջում գործում է կարիերայի պատասխանատու, որը տեղեկացնում է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին, այդ թվում՝ նաև քոլեջում առկա հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացված են վերջին տարիների ուսանողների զբաղվածության որոշակի տվյալները: Այնուամենայնիվ, վերլուծության մեջ բացակայում է հստակ տեղեկատվություն այն մասին, թե շրջանավարտների քանի տոկոսն է աշխատանքի անցել

կարիերայի պատասխանատուի օժանդակությամբ: Շրջանավարտների հետագծի ուսումնասիրության համաձայն՝ 138 շրջանավարտներից 16-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, իսկ վերջին հինգ տարիների շրջանավարտներից 360-ը աշխատում են: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը չի իրականացրել վերլուծություն այն մասին, թե շրջանավարտներից քանիսն են աշխատում իրենց մասնագիտությամբ: Միևնույն ժամանակ, քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան՝ ապահովելով շարունակական կապ նրանց հետ:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով նրանց հանձնարարվում են ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ, դիպլոմային աշխատանքներ, ինչպես նաև առաջադրանքներ, որոնք պարունակում են հետազոտական բաղադրիչ: Մասնավորապես, «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում իրականացրել են գործնական փորձարկումներ՝ ուսումնասիրելով դեղամիջոցների հատկությունները: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության ուսանողները Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնում վերլուծել են մթնոլորտային աղտոտվածության մակարդակը: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր առաջադրանքների կատարման մեջ հիմնականում գերակշռում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:

Ուսանողական խորհուրդն իր գործունեությունը կազմակերպում է համաձայն տարեկան աշխատանքային պլանի, որտեղ ամրագրվում են նախատեսվող միջոցառումները, դրանց կատարման ժամկետները և պատասխանատուները: ՈՒԽ-ն պարբերաբար քննարկում և պլանավորում է նախագահության և տեղակալների ընտրության, խորհրդի կազմի թարմացման, կազմակերպչական ընթացիկ հարցերի և միջոցառումների կազմակերպման հետ կապված հարցերը: ՈՒԽ նիստերը արձանագրվում են:

ՈՒԽ-ն համագործակցում է այլ քոլեջների ուսանողական խորհուրդների հետ, մասնավորապես՝ Երևանի հայ-հունական պետական քոլեջի, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի և Երևանի թեթև արդյունաբերական պետական քոլեջի հետ: Մասնավորապես՝ սպորտային մրցաշար է տեղի կազմակերպվել ԵՊՏՔ-ի և Երևանի թեթև արդյունաբերական պետական քոլեջի միջև: Բացի այդ, քոլեջի ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել տարբեր փառատոնների, մրցույթների, գիտաժողովների և ցուցահանդեսների, այդ թվում՝ «Ուտեստ Ֆեստ Երևան» փառատոնին, «Կրթություն և կարիերա EXPO 2019» ցուցահանդեսին, «Կոմիտաս վարդապետ» ցերեկույթին, ինչպես նաև շրջայցերի տարբեր համալսարաններում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈՒԽ-ը նաև ձեռնարկում է քայլեր ուսանողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Մասնավորապես, դեպք է գրանցվել, երբ ուսանողը ՈՒԽ-ին տեղեկացրել է դասախոսի կողմից իր իրավունքների խախտման մասին, և ՈՒԽ-ն այդ հարցը ներկայացրել է քոլեջի ղեկավարությանը, ինչի արդյունքում այն լուծում է ստացել: Ուսանողները բարձրաձայնել են ջեռուցման խնդիրը, որը վեր հանվել է ՈՒԽ-ի կողմից, և լսարանում ավելացվել է ջեռուցման սարք: ՈՒԽ-ի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով 2024 թվականին խորհրդի կողմից ուսանողների շրջանում անցկացվել է հարցում՝ ուղղված ՈՒԽ աշխատանքներից բավարարվածության մակարդակի վեր հանմանը: Կարող ենք փաստել, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները ակտիվ ընթացք ունեն:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումներ միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ

դարձավ, որ ուսանողների կողմից վեր հանված խնդիրները հիմնականում վերաբերում են բուֆետի բացակայությանը և համակարգիչների թարմացմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են ուսանողների հավաքագրման միջոցառումներ, ներառյալ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները, որն ապահովում է քոլեջի մասին դիմորդների իրազեկվածության բարձրացումը և ուսանողների մասնագիտության ընտրության հիմնավորված որոշումների ընդունումը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում կատարելը կարող է նպաստել այդ միջոցառումների իրականացման համակարգային վերահսկողության բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իրականցնում է որոշակի խորհրդատվական պարապմունքներ, ինչը նպատակ ունի ապահովել կրթական միջավայրի արդյունավետությունը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ պարապմունքներից բավարարվածության ցածր մակարդակը պետք է խթանի քոլեջին ձեռնարկելու նոր միջոցներ դրանց բարելավումն ապահովելու ուղղությամբ: Հարկ է նշել նաև, որ ուսանողների կրթական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա, ներառյալ օտար լեզվի լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը, կխթանի ուսանողների լեզվական կարողությունների զարգացումը և նրանց մասնագիտական հմտությունների կատարելագործումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողները ազատորեն կարող են դիմել վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, ինչն ապահովում է խնդիրների բարձրաձայնման հնարավորությունը: Դրական է, որ քոլեջը կիրառում է ուսանողների կրթական կարիքների գնահատման մեխանիզմներ, այդ թվում նաև ունի ուսանողների բողոքների և առաջարկությունների արկղ, ինչն ապահովում է ուսանողների կարծիքների և կարիքների շարունակական վերհանում և նրանց մասնակցության ակտիվացումը ուսումնական միջավայրի բարելավման գործընթացում:

Դրական է, որ ուսանողներին տրվում են հետազոտական բաղադրիչով առաջադրանքներ, ինչը նպաստում է նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը և ինքնուրույն վերլուծական մտածողության ձևավորմանը: Առավել արդյունավետ է, երբ հետազոտական աշխատանքները կապվում են գործնական փորձի հետ, որոնք թույլ են տալիս ուսանողներին ձեռք բերել կիրառական գիտելիքներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՈւԽ-ն կազմակերպում է իր գործունեությունը ըստ տարեկան աշխատանքային պլանի՝ ամրագրելով միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուները, ինչպես նաև աջակցելով ուսանողների իրավունքների պաշտպանության գործում, որն ապահովում է ուսանողների ներգրավվածության բարձր մակարդակը ուսումնական և արտաուսումնական գործընթացներում:

Դրական է, որ քոլեջում գործում է կարիերայի պատասխանատու, որը տեղեկատվություն է տրամադրում շրջանավարտներին թափուր աշխատատեղերի վերաբերյալ և ձեռնարկում է որոշակի քայլեր ուսանողների զբաղվածության տվյալների վերլուծության ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ կարիերայի աջակցության արդյունավետությունը կարող է էապես բարձրանալ, եթե գործունեության արդյունքների մեջ ներառվեն չափելի ցուցանիշներ, մասնավորապես՝ շրջանավարտների մասնագիտական զբաղվածության տոկոսային հարաբերակցությունը և այն շրջանավարտների բաժինը, որոնք աշխատանքի են անցել քոլեջի կարիերայի աջակցության ծրագրերի միջոցով: Սա հնարավորություն կտա առավել նպատակային

գնահատելու աջակցման մեխանիզմների արդյունավետությունը և վերանայելու դրանց կատարելագործման ուղիները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊՏՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմներ, առկա են խորհրդատվությունների տրամադրման որոշակի մեխանիզմներ, կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, վարչական աշխատակազմը բաց է ուսանողների հարցերի և խնդիրների քննարկման համար, ուսանողական խորհուրդը ակտիվորեն մասնակցում է ուսանողների իրավունքների պաշտպանությանը և արտալսարանային գործունեության կազմակերպմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՔ-ը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2022-2027-թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջը նպատակադրել է համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան (սահմանված է որպես հիմնախնդիր), որի իրագործման համար ՌԾ-ում ուրվագծվել են հետևյալ քայլերը. շարունակել բարձրակարգ մանկավարժ - դասախոսների ներգրավումը, կրթական նոր տեխնոլոգիաների տիրապետելու, էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և կրթական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ շարունակել դասախոսների պարբերական վերապատրաստումները, խթանել դասախոսների մասնակցությունը կրթության բնագավառում իրականացվող զարգացման ծրագրերին, խրախուսել նրանց ինքնակրթությունը, ներդնել մանկավարժական - դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ, բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը: Սահմանված քայլերը սակայն, չեն արտացոլվում ԵՊՏՔ 2022-27 թթ ՌԾ պլան-ժամանակացույցում:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը» կարգի, որի համաձայն, աշխատանքի ընդունումն իրականացվում է մրցութային կարգով՝ աշխատատեղի վրա դրվող չափանիշներին համապատասխան: Դասախոսական կազմի համալրման նպատակին են ծառայում հայտարարությունները լիազոր մարմիններ, «Կրթություն» շաբաթաթերթում, Ֆեյսբուքյան էջում և կայքէջում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվող և իրականացվող մրցույթներին հիմնականում մինչև 5 թեկնածու է մասնակցել: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները» կարգով սահմանվում են դասախոսական կազմի մասնագիտական որակների

գնահատման չափանիշները՝ որպես գործիքներ կիրառելով հարցազրույցը, անձնական գործի ուսումնասիրությունը, աշխատանքի ընդունման մրցույթային կարգը: Սակայն, ըստ կրթական ծրագրերի դասախոսի առջև դրված հստակ պահանջներ չկան:

Քոլեջում դասավանդում են 66 դասախոս, որոնցից 60-ը ունեն բարձրագույն կրթություն, 6-ը՝ միջին մասնագիտական: Համատեղող դասախոսների թիվը 15-ն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջի 2 դասախոս գործատուներ են, իսկ շրջանավարտ-դասախոսների թիվը 3-ն է:

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին, սակայն առկա են որոշ բացառություններ: Փաստաթղթերի ուսումնասիրությունը փաստում է, որ հիմնականում որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ նախկինում եղել են դեպքեր, երբ թեկնածուն բարձրագույն կրթություն է ստացել մասնագիտական մի բնագավառում, իսկ աշխատանքի տեղավորման հիմք է հանդիսացել այլ բնագավառում սերտիֆիկատի առկայությունը:

Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ դասախոսական կազմը մինիմում 1 և մաքսիմում 22 մոդուլ/առարկա է դասավանդում:

2024 թ. քոլեջում հաստատվել է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգերը» կանոնակարգը՝ համաձայն որի պլանավորվել է իրականացնել դասալսումներ և ուսանողական հարցումներ՝ դասավանդման որակի և արդյունավետության ստուգման նպատակով: Քոլեջն ունի դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց և դասալսումների անցկացման ձևաթերթ՝ «Դասի վերլուծություն» և «Դասի գնահատման թերթ»: Վերջինում գնահատումն իրականացվում է 20 չափանիշների համաձայն՝ յուրաքանչյուրին տալով 0-ից 5 միավոր: Գնահատման արդյունքում ձևավորվող միավորները դասը որակավորում են որպես շատ վատ՝ 0-30 միավոր, վատ՝ 31-40 միավոր, նվազ բավարար՝ 41-60 միավոր, միջին՝ 61-70 միավոր, լավ՝ 71-80 միավոր, շատ լավ՝ 81-90 միավոր և գերազանց՝ 91-100 միավոր: Ըստ կարգի, քոլեջում ներկայումս իրականացվում են դասալսումներ՝ ամբիոնի վարիչների, մեթոդիստի, ուսումնական գծով փոխտնօրենի և տնօրենի կողմից: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում, որոնց մասին հաշվետվություններ են ներկայացվում մանկավարժական խորհրդին: Դասալսումների արդյունքները քննարկվում են նաև դասախոսների հետ՝ ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր քննարկումների ձևաչափով: Արդյունքում բացահայտվել են ուսումնառության գործընթացում առկա խնդիրներն ու թերությունները, և առաջարկվել են նպատակային լուծումներ: Մասնավորապես, առաջարկվել է ուշադրություն դարձնել գործնական աշխատանքների կատարման կարողությունների զարգացմանը և դիդակտիկ միջոցների արդյունավետ կիրառմանը: Նշվել է նաև, որ ուսումնառության նյութը ցանկալի է տրամադրել տպագիր տարբերակով՝ ուսանողների հեռախոսից կախվածությունը նվազեցնելու և լսարանում դասագրքեր օգտագործելու հնարավորություն ստեղծելու նպատակով: Բացի այդ, քննարկումների արդյունքում առաջարկվել է դասի կառուցվածքում ընդգրկել խմբային աշխատանքներ, դերային խաղեր և բանավեճերի կազմակերպում՝ ուսումնական գործընթացը ավելի ակտիվ և ներգրավված դարձնելու համար:

Քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ, չպլանավորված և պլանավորված դասալսումներ՝ ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դրանց արդյունքների վերաբերյալ վերլուծությունները տեղ են գտել քոլեջի վերջին 4 ուսումնական

տարիներում կատարած աշխատանքների հաշվետվություններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ կարգի քոլեջում հարցումների միջոցով իրականացվում է դասախոսական կազմի գնահատում: Հարկ է նշել, որ դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ իրականացվող հարցումները ընդհանրական են՝ առանձնացված չեն ըստ դասավանդող մասնագետների և առարկաների:

Քոլեջը հետևողականորեն ներգրավում է երիտասարդ մասնագետներին, ապահովելով նրանց մասնագիտական աճն ու ինտեգրումը: Սկսնակ դասախոսների համար իրականացվում են մենթորական աշխատանքներ, որոնց շրջանակում նրանց ծանոթացնում են առարկայական և մոդուլային ծրագրերի կազմման չափանիշներին, տեսական և գործնական ժամերի բաշխմանը, գնահատման մեթոդներին և թեմատիկ օրացույցային պլանին: Դասախոսներին տրամադրվում են ուսումնական նյութեր, ինչպես նաև կազմակերպվում են լավագույն փորձի փոխանակման և դասավանդման մեթոդների զարգացման ծրագրեր: Այս գործողությունները տեսանելի են ամբիոնների նիստերի արձանագրություններում, ինչպես նաև վերջին 4 տարիների հաշվետվություններում:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ է նախատեսել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար՝ դասախոսների մասնագիտական զարգացման նպատակով: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող մեթոդական վերապատրաստումներին: Մասնագիտական վերապատրաստումներ վերջին անգամ անցկացվել են 2018 թվականին՝ «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում, որի ընթացքում վերապատրաստում է անցել 4 դասախոս: Գերմանիայի հետ համագործակցության շրջանակներում, մասնավորապես «Մասնագիտական կրթություն և կողմնորոշում» շինարարական ոլորտի ծրագրի շրջանակներում, 2023 թվականին Գերմանիայի Դաշնության Լայպցիգ քաղաքում կազմակերպվել են վերապատրաստումներ, որոնք նպատակ են ունեցել զարգացնել կառավարչական հմտությունները և ուսանողակենտրոն ուսուցման մեթոդաբանությունը: Այս վերապատրաստումներին մասնակցել են ԵՊՏՔ-ի երկու աշխատակիցներ:

Քոլեջի հիմնական դասախոսական կազմը կազմում է 77.3%, համատեղությամբ աշխատող դասախոսները՝ 22.7%, որոնցից 46.5%-ը մինչև 40 տարեկան տարիքային խմբում է: Դասախոսական կազմի կայունության վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջն ունի երիտասարդացման միտում. ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 46 է, 5 տարի առաջ այս ցուցանիշը եղել է 53, իսկ 10 տարի առաջ՝ 55: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի կայունության ապահովմանն ուղղված քայլերից են որակյալ մասնագետների ներհոսքի ապահովումը, դասախոսների պարբերական գնահատումն ու խրախուսման գործընթացները: Կրթական ծրագրերում մասնագիտական մոդուլներում ներգրավված է 35 դասախոս: Այնուամենայնիվ, քոլեջում չի գործում դասախոս թեկնածուների բազա: Քոլեջի հաստիքային վարչական յոթ աշխատակիցներ՝ իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգահեռ, ներգրավված են նաև դասավանդման գործընթացում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում դասախոսական կազմի խրախուսումն այս պահին իրականացվում է միանվագ դրամական պարգևատրմամբ (տարեվերջյան՝ աշխատակիցների 100%-ը), ինչպես նաև շնորհակալագրերի և պատվոգրերի տրամադրմամբ: Այս միջոցառումները արձանագրվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ը պլանավորում է խրախուսման քաղաքականության մեջ տարբերակում մտցնել՝ կիրառելով վաստակած միավորների և տոկոսային սանդղակի վրա

հիմնված մոտեցում: 2024 թ. փետրվարին հաստատված «Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը» կարգի համաձայն՝ յուրաքանչյուր դասախոսին ուսումնական տարվա սկզբում նախատեսվում է տրամադրել 100 միավոր, որը կփոփոխվի՝ կախված տարվա ընթացքում դրսևորված արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի ցուցանիշներից. բարեխիղճ աշխատանքի դիմաց միավորները կավելացվեն, իսկ անբարեխիղճ աշխատանքի դեպքում միավորները կնվազեն: Ներկայումս այս կարգը քոլեջում դեռևս չի ներդրվել, սակայն նախատեսվում է կիրառել այն դասախոսների խրախուսման համակարգը առավել թիրախային և համարժեք դարձնելու նպատակով:

Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը որդեգրել է դասախոսական կազմի համալրման և զարգացման ռազմավարական մոտեցում, ինչպես նաև նախատեսել է դասախոսների շարունակական մասնագիտական զարգացում ապահովող մեխանիզմներ, որն ապահովում է դասավանդման որակի բարձրացումը, մասնագետների պատրաստման համապատասխանությունը կրթական ծրագրերի նպատակներին և աշխատաշուկայի պահանջներին: Այնուամենայնիվ, սահմանված գործողությունների արտացոլումը ՌԾ-ի պլան-ժամանակացույցում կնպաստի դրանց իրագործման համակարգվածությանը, իրականացման վերահսկողության արդյունավետությանը:

Դրական է, որ դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է մրցութային սկզբունքով, ինչը նպաստում է թափանցիկության ապահովմանը և որակյալ մասնագետների ներգրավմանը: Այնուամենայնիվ, դասախոսների մասնագիտական որակավորման հստակ չափանիշների սահմանումը կրթական ծրագրերում կարող է բարձրացնել դասավանդման պահանջների հստակությունը և նպաստել համապատասխան մասնագետների ներգրավմանը:

Քոլեջում ձևավորված է դասավանդման որակի մշտադիտարկման համակարգ, որի շրջանակում իրականացվում են դասալսումներ, ինչպես նաև ուսանողական հարցումներ՝ դասավանդման արդյունավետության գնահատման նպատակով: Այնուամենայնիվ, դասախոսների անհատական գնահատման համակարգի բացակայությունը կարող է սահմանափակել դասավանդման որակի օբյեկտիվ վերլուծության և բարելավման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը խրախուսում է երիտասարդ մասնագետների ներգրավումը և նրանց ինտեգրման գործընթացը, ինչի շրջանակում իրականացվում են մենթորության ծրագրեր՝ դասավանդման մեթոդաբանության բարելավման նպատակով, ինչը նպաստում է երիտասարդ մասնագետների մասնագիտական կայացմանը և դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Դրական է, որ քոլեջը նախատեսել է դասախոսների մասնագիտական զարգացմանն ուղղված ֆինանսական միջոցներ, և դասախոսները պարբերաբար մասնակցում են վերապատրաստումների: Սակայն մասնագիտական վերապատրաստումների հաճախականությունը ըստ կարիքների բացահայտման կբարելավի դասախոսների հմտությունների արդիականացումը, ինչպես նաև կապահովի կրթական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան դասավանդում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասախոսների խրախուսման համակարգում ներառված են որոշ մեխանիզմներ, սակայն խրախուսման նոր համակարգի (միավորային գնահատման և տոկոսային սանդղակի մեխանիզմների) ներդրումը

հնարավորություն կտա խրախուսման գործընթացը դարձնել առավել թիրախային, դասախոսների մոտիվացիան՝ առավել բարձր:

Քոլեջի դասախոսական կազմի երիտասարդացման միտումը վկայում է անձնակազմի կառավարման քաղաքականության արդյունավետության մասին: Սակայն դասախոսների թեկնածուների բազայի բացակայությունը կարող է սահմանափակել մասնագետների ներգրավման գործընթացը, հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լրացնել թափուր հաստիքները կամ ապահովել նոր մասնագիտությունների համար համապատասխան դասախոսներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ԵՊՏՔ-ն ունի կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական գործունեության նկատմամբ որոշակիորեն հստակեցված պահանջներ, գործում են դասախոսների գնահատման որոշակի մեխանիզմներ, երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՔ-ն համապատասխանում է ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: ԵՊՏՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5 -ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտական աշխատանքների իրականացումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է դիտարկվում: Մասնավորապես՝ քոլեջի հետազոտության ոլորտի ռազմավարության առանցքային ուղղությունը սահմանվում է 2024 թվականի փետրվարին ՄՈՒՀ-ի կողմից հաստատված «Հետազոտական աշխատանքների ռազմավարության» փաստաթղթով, որը կենտրոնանում է արդյունավետ դասավանդման և հետազոտական գործունեության համատեղման կարողության ձևավորման վրա՝ նպաստելով որակյալ մասնագետների պատրաստմանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում հետազոտական աշխատանքներն իրականացվում են տվյալ մոդուլի կամ առարկայի շրջանակներում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով: Սակայն այսպիսի աշխատանքներ իրականացվում են ոչ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում և առկա չեն անհատական գործնական աշխատանքների կամ առաջադրանքների հաստատված ցանկ: Հետազոտական աշխատանքին հատկացված ժամերը չեն արտացոլվում մոդուլներին կամ առարկաներին հատկացված ժամաքանակում:

Քոլեջում սահմանված է անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ (Հետազոտական աշխատանքների ռազմավարություն, 2024): Կարգում սահմանված են հետազոտական աշխատանքի բաղադրիչները՝ անվանաթերթ/տիտղոսաթերթ, բովանդակություն, ներածություն, հիմնական մաս, եզրակացություն/ներ, օգտագործված գրականության ցանկ, հավելված: Այս բաղադրիչները ընդհանուր առմամբ պահպանվում են: Փորձագիտական խմբի կողմից դիտարկված աշխատանքներում հիմնականում ներկայացած է հետազոտության նպատակը, դիտարկվող հարցերի վերլուծությունը, տվյալների հավաքագրումը, ստացված արդյունքների ներկայացումն ու վերլուծությունը, առկա են նաև

եզրակացությունները: Աշխատանքները կատարվում են տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով:

Քոլեջում հետազոտական գործունեությունն իրականացվում է գործատուների, գիտահետազոտական կենտրոնների, բուհերի և մասնագիտական հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում: Մասնավորապես՝ «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով այցելել են ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի հետ, որտեղ իրականացրել են գործնական փորձարկումներ: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության ուսանողները հետազոտություններ են իրականացրել Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնում՝ վերլուծելով մթնոլորտային աղտոտվածության մակարդակը: «Կլինիկական պաթոլոգիա» առարկայի շրջանակներում «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները այցելել են «Բեսթ Լայֆ» բժշկական կենտրոն, որտեղ ծանոթացել են դեղատան աշխատանքին, բժշկական սարքավորումների գործելակարգին և մասնակցել հետազոտական գործընթացներին: Ուսանողները գործնականում իրականացրել են գլյուկոմետրիա, որին հաջորդել է թեմատիկ քննարկում՝ «Շաքարային դիաբետը որպես ապրելակերպ» թեմայով: Բացի այդ, լաբորատոր պայմաններում ուսանողների մասնակցությամբ իրականացվել է արյան խմբերի և ռեզուս գործոնի որոշման գործընթաց: «Կենսաբանություն» առարկայի շրջանակներում ուսանողները այցելել են Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ, որտեղ ուսումնասիրել են լաբորատոր հնարավորությունները, դիտարկել քիմիական փորձարկումներ, ինքնուրույն պատրաստել պրեպարատներ և մանրադիտակով իրականացրել համապատասխան մանրադիտումներ: Զբոսաշրջության մասնագիտության ուսանողների համար կազմակերպվել են գիտաճանաչողական այցեր, որոնց ընթացքում նրանք հանդես են եկել որպես զբոսավարներ: Նրանց տրվել է հնարավորություն ինքնուրույն ուսումնասիրելու Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը, հավաքագրելու համապատասխան տեղեկատվություն տարբեր աղբյուրներից և մշակելու ներկայացումներ՝ կիրառելով զբոսավարական հմտություններ:

Ուսանողներին նորարարական, հետազոտական աշխատանքների, ռեֆերատների հանձնարարականների մասին քննարկումներ իրականացվում են ամբիոնի նիստերում, կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփվում են տարեվերջյան ուսումնական գործընթացի հաշվետվություններում:

Տվյալ մոդուլի շրջանակներում հետազոտության թեմաներն առաջարկվում են դասախոսի կողմից, ուսանողներն իրենք են ընտրում, թե որ թեմայով հետազոտություն իրականացնեն, իսկ դասախոսը իր խորհրդատվություններով օգնում և ուղղորդում է նրանց՝ աշխատանքի կատարման ընթացքում: Հետազոտական աշխատանքի համար չկա հստակ սահմանված գնահատման մեխանիզմ կամ գնահատման թերթիկ, այն իրականացվում է դասախոսի կողմից ընտրված գնահատման մեթոդաբանությամբ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության որոշակի տարրեր պարունակում են նաև տարբեր մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները և ինքնուրույն աշխատանքները: Այնուամենայնիվ, նշված աշխատանքներում մեծամասամբ առկա չեն ուսանողի ինքնուրույն վերլուծությունները, եզրակացությունները և աղբյուրների հիշատակումը: Ուսանողների մասնակցությամբ վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված հետազոտական աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում կենտրոնացած են եղել 2023-2024 ուսումնական տարում, որի ընթացքում իրականացվել է 30 հետազոտական ծրագիր՝

ընդգրկելով բնապահպանական խնդիրների, լաբորատոր հետազոտությունների և զբոսաշրջության ոլորտները: Մասնավորապես, «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները կատարած փորձարարական աշխատանքների շրջանակներում ստացել են բույսերի հականեխիչ և հակաբորբոքային թուրմեր, պատրաստել մոմիկներ և քսուկներ, ինչպես նաև ընտրել և ուսումնասիրել որոշակի դեղամիջոցներ, օրինակ՝ ացիկլովիրը: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները վերլուծել են տարբեր կազմակերպությունների ֆինանսական տվյալները, մարքեթինգային ուսումնասիրությունների շրջանակում բաժանվել խմբերի և իրականացրել SWOT վերլուծություն Samsung և Apple ընկերությունների համար: «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության ուսանողների հետազոտությունները ներառել են սպեկտրոֆոտոմետրիական չափումներ, էլեկտրոդային մեթոդներով վերլուծություններ, ինչպես նաև քիմիական անալիզների համար անհրաժեշտ լուծույթների պատրաստում: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ մինչ 2023-2024 ուսումնական տարին քոլեջում իրականացվել է միայն մեկ հետազոտական ծրագիր: Միևնույն ժամանակ, ուսանողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ գիտական հրապարակումներ չեն իրականացվել:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում կազմել են մի շարք ձեռնարկներ և մեթոդական ուղեցույցներ: Հատկանշական են «Անօրգանական նյութերի ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» (2011), «Օրգանական նյութերի ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» (2011) և «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» (2024) ուսումնամեթոդական նյութերը: Դասախոսական կազմը հետամուտ չէ մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությանը: Փաստաթղթերի և ուսումնամեթոդական ձեռնարկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք բավական սակավաթիվ են, և վերջինները հրատարակվել են մինչև 2024 թվականը:

ՄՈՒՀ-ում դասավանդող որոշ դասախոսներ ունեն տպագրված գիտական աշխատանքներ, սակայն դրանք չեն վերաբերում քոլեջում իրականացված հետազոտություններին: Վերջին հինգ տարիների ընթացքում նրանք տարբեր մասնագիտական ամսագրերում հրապարակել են շուրջ 28 հոդված, թեզիս և գիտաժողովում զեկուցում: Հետազոտական գործունեության խթանման առումով քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր: Քոլեջը նախատեսում է ներդնել ուսանող-դասախոս համագործակցության խթանման մեխանիզմներ, որոնց շրջանակներում դասախոսները, ովքեր ներգրավում են ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում, կարժանանան խրախուսման մեխանիզմների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջում հետազոտական գործունեությունը դիտարկվում է որպես ռազմավարական առաջնահերթություն, ինչպես նաև ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող մեխանիզմների առկայությունը, որոնք ապահովում են հետազոտական միջավայրի ձևավորումն ու ակադեմիական մտահոգությունների խթանումը: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ հետազոտական աշխատանքների ընդգրկումը բոլոր կրթական ծրագրերում, ինչպես նաև անհատական գործնական աշխատանքների կամ առաջադրանքների հաստատված ցանկերի ստեղծումը կարևոր քայլ կլինի հետազոտական մշակույթի կայուն զարգացման համար:

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ քոլեջում սահմանված է անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ, այնուամենայնիվ, կարևոր է կարգով սահմանված բաղադրիչների հետագա հստակեցումը և լիարժեք ապահովումը, ինչը կնպաստի ուսանողների հետազոտական աշխատանքների կառուցվածքային ամբողջականությանը, մեթոդաբանական հետևողականությանը և գիտական աշխատանքների որակի բարձրացմանը:

Խումբը դրական է գնահատում գործատուների, գիտահետազոտական կենտրոնների, բուհերի և մասնագիտական հաստատությունների հետ համագործակցության առկայությունը, որն ուսանողներին հնարավորություն է տալիս կիրառելու իրենց տեսական գիտելիքները գործնական միջավայրում՝ ամրապնդելով նրանց մասնագիտական փորձառությունը: Միաժամանակ, խումբը գտնում է, որ ներկայումս համագործակցությունները հիմնականում ընդգրկում են որոշակի մասնագիտական ուղղություններ, մինչդեռ անհրաժեշտ է ընդլայնել դրանց շրջանակը՝ տարբեր ոլորտների ուսանողներին հետազոտական գործունեությանը ներգրավելու, նրանց մասնագիտական հեռանկարները լայնացնելու նպատակով:

Խումբը գտնում է, որ հետազոտական աշխատանքների համար հստակ սահմանված գնահատման մեխանիզմների կամ չափորոշիչների բացակայությունը կարող է հանգեցնել գնահատման գործընթացի անհամաչափության և ուսանողների հետազոտական առաջընթացի ոչ օբյեկտիվ դիտարկման:

Փորձագիտական խումբը գնահատում է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում դասավանդող որոշ դասախոսներ ունեն տպագրված գիտական աշխատանքներ, ինչը վկայում է նրանց մասնագիտական ակտիվության մասին: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ այս հրապարակումների ինտեգրումը ուսումնական գործընթացում, ինչպես նաև դրանցում ուսանողների ներգրավումը, կարող է նպաստել հետազոտական մշակույթի զարգացմանը, դասախոս-ուսանող գիտական համագործակցության ամրապնդմանը և ուսանողների մասնագիտական կողմնորոշման հստակեցմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև ուսանող-դասախոս համագործակցության խթանման քոլեջի նախաձեռնությունը, որը նախատեսում է դասախոսների խրախուսում՝ ուսանողներին գիտահետազոտական նախագծերում ներգրավելու համար: Ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավման խրախուսումը կհանգեցնի գիտական հետազոտությունների որակի բարձրացման, ուսանողների հետազոտական հմտությունների խորացման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում հետազոտական գործունեությունը դիտարկվում է որպես ռազմավարական առաջնահերթություն, գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման որոշ մեխանիզմներ, ուսանողներին հանձնարարվում են հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ, գործատուների, գիտահետազոտական կենտրոնների և բուհերի հետ համագործակցությունը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊՏՔ-ն համապատասխանում է **չափանիշ 6-ի** պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊՏՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրի առաջնային նպատակներից է տեխնոլոգիական հագեցվածությամբ ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ձևավորումը՝ ուսանողների և աշխատակիցների արդյունավետ գործունեության խթանման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսված գործողությունները ներառում են ուսումնական գործընթացի նյութատեխնիկական պայմանների բարելավում, ուսումնական լաբորատոր բազայի զարգացման և արդիականացման քայլեր, ինչպես նաև անհրաժեշտ մասնագիտական գրականության թվայնացում և պատշաճ պայմաններով ընթերցասրահի ստեղծում:

Քոլեջի ընդհանուր օգտագործման մակերեսը կազմում է 5446.7 մ², իսկ բակի տարածքը՝ շուրջ 661.325 մ²: Ուսումնական հաստատությունը տեղակայված է երեք հարկանի մասնաշենքում, որտեղ գտնվում են լսարաններ, մասնագիտական կաբինետներ, արհեստանոցներ, լաբորատորիաներ, գրադարան, սպորտդահլիճ և ճաշարանի համար նախատեսված տարածք: Քոլեջում առկա է 30 լսարան, որոնցից երեքը նախատեսված են որպես համակարգչային սենյակներ՝ հագեցած 20 համակարգչով, որոնք ապահովված են ինտերնետային կապով: Բացի այդ, աշխատակիցների օգտագործման համար առանձնացված է 11 համակարգիչ: Ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզվել է, որ քոլեջում գործում է կարի արհեստանոց՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, սակայն այն դեռևս չի կիրառվում ուսումնական գործընթացում: Քոլեջն ունի 3 շարժական պրոյեկտոր, որոնք կիրառվում են դասերի ընթացքում ցուցադրությունների կազմակերպման նպատակով: Ռեսուրսների ուսումնասիրության հիման վրա պարզվել է, որ քոլեջում գործում են քիմիայի, ոսկերչության լաբորատորիա, դեղագործության և ատամնատեխնիկական գործի լաբորատորիաներ, որոնք մասամբ համալրված են համապատասխան նյութերով, սարքավորումներով և գործիքներով: Այնուամենայնիվ, «Շրջակա միջավայրի պահպանման և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության համար նախատեսված սարքավորումները կամ հնացած են, կամ առկա չեն: Այս խնդրի լուծման նպատակով ուսանողների գործնական հմտությունների զարգացման համար դասերը կազմակերպվում են գործընկեր բուհերում, այդ թվում՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում և Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և այլն:

Քոլեջի գրադարանը ներառում է շուրջ 3478 միավոր գրականություն, որից 2186-ը մասնագիտական է: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ գրադարանի ֆոնդը հիմնականում հայերեն լեզվով գրականություն է պարունակում: Անհրաժեշտ գրքերի համալրման նպատակով քոլեջը համագործակցում է Երևանի համար 32 գրադարանի, «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգի» և այլ գրադարանների հետ, ինչպես նաև ուսանողներն ու դասախոսները օգտվում են Հայաստանի ազգային գրադարանից: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվել է, որ գրադարանը դեռևս թվայնացված չէ, սակայն այդ ուղղությամբ աշխատանքներ արդեն սկսվել են, և առկա գրականության անվանացանկը թվայնացվել է: Միևնույն ժամանակ, քոլեջը դեռևս չի հանդիսանում էլեկտրոնային գրադարանների կամ գիտական տեղեկատվական ցանցերի անդամ:

Քոլեջի ֆինանսական մուտքերը ձևավորվում են ուսման վարձավճարներից, պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհներից և այլ լրացուցիչ աղբյուրներից։ 2023 թվականին քոլեջի բյուջեի 79,72%-ը կազմել են պետական ֆինանսավորման միջոցները, իսկ 20,28%-ը՝ արտաբյուջետային մուտքերը, որոնցից 20,01%-ը ստացվել է ուսանողների վարձավճարներից, իսկ 0,27%-ը՝ տեղեկանքների տրամադրման և ընդունելության վճարներից։ Քոլեջի ծախսերի հիմնական մասը ուղղվում է աշխատավարձի ֆոնդին, որը 2023 թվականին կազմել է ընդհանուր ծախսերի 75,84%-ը։ Բացի այդ, քոլեջը ծախսեր է իրականացնում կոմունալ վճարումների, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռքբերման, անհրաժեշտ գործիքների և սարքավորումների համալրմանն և այլ ուղղություններով։ 2022 թվականին ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման վրա հատկացվել է ընդհանուր ծախսերի 0,05%-ը, իսկ 2023 թվականին՝ 4,87%-ը։

Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն կարճաժամկետ դասընթացներ չի իրականացնում։ Այնուամենայնիվ, նախկինում իրականացվել է «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» եռամսյա դասընթաց, ինչը վկայում է այս ուղղությամբ փորձի առկայության մասին։

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ քոլեջը առանձին կրթական ծրագրերի համար նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի կատարել։ Սակայն 2024 թվականին մշակվել է «Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները և ընթացակարգերը» փաստաթուղթը, որի հիման վրա նախատեսվում է կատարելագործել ֆինանսների բաշխման համակարգը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների հստակ և նպատակային օգտագործում ռազմավարական ուղղությունների շրջանակներում։

2024-2025 ուսումնական տարում ուսման վարձավճարի չափերը բարձրացվել են. միջին մասնագիտական բոլոր մասնագիտությունների համար ավելացվել է 40,000 դրամով, իսկ նախնական մասնագիտական կրթական ծրագրերում՝ 20,000 դրամով։

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2022 թվականին քոլեջը մասնակցել է ֆինանսավորման ծրագրի, որի արդյունքները կյանքի են կոչվել 2023 թվականին։ Դրամաշնորհի միջոցներով ձեռք է բերվել շուրջ 9 միլիոն դրամի գույք, արդիականացվել են համակարգչային լսարանները, արհեստանոցներն ու լաբորատորիաները, ինչպես նաև ձեռք են բերվել ժամանակակից ՏՀՏ միջոցներ։ 2024 թվականին քոլեջը դիմել է նոր դրամաշնորհային ծրագրի, որի շրջանակներում նախատեսվում է աստիճանաբար համալրել լաբորատորիաներն ու արհեստանոցները անհրաժեշտ ուսումնական սարքավորումներով և նյութերով։

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցությունն իրականացնում է «Mulberry» համակարգի միջոցով, մինչդեռ ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փոստերի և զրուցարանների միջոցով։ Այնուամենայնիվ, քոլեջում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ դեռևս ներդրված չէ։

Ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ քոլեջն ապահովված է կենտրոնական ջեռուցման համակարգով, հակահրդեհային համակարգով, կրակմարիչներով, տեսանկարահանող սարքավորումներով և պահակակետով։ Բոլոր հարկերում տեղադրված են տարհանման պլաններ։ Քոլեջն ունի բուժկետ, որի ծառայություններից ուսանողները և դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է, որ քոլեջում ուսանում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեք ուսանող, որոնք հենաշարժողական խնդիրներ չունեն։ Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ նրանց համար ձևավորվել է ուղեկցող պատասխանատուների խումբ։ Այնուամենայնիվ, քոլեջում բացակայում են թեքահարթակները և հատուկ կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմանները։

Փորձագիտական ուսումնասիրությունների և ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզվել է, որ որոշ լաբորատորիաներում և արհեստանոցներում բացակայում են անվտանգության ապահովման կարևոր տարրերը, այդ թվում՝ պաշտպանիչ միջոցները, անվտանգության կանոնների վերաբերյալ տեղեկատվական պաստառները, նախազգուշացման նշանները և հրահանգները: Միաժամանակ, փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվել է, որ դասերի ընթացքում ուսանողներին բանավոր կերպով ներկայացվում են անվտանգության կանոնները՝ համապատասխան գործնական առաջադրանքները կատարելու համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակներում 2024 թվականին քոլեջը իրականացրել է ռեսուրսների հասանելիության գնահատման հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: Հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողների և դասախոսների շուրջ 64%-ը բավարարված է տրամադրվող ռեսուրսների կիրառելիությամբ, հասանելիությամբ և արդյունավետությամբ: Այնուամենայնիվ, ըստ հարցման արդյունքների հիմնական շեշտադրումները վերաբերում են լաբորատորիաների և արհեստանոցների հագեցվածության և դրանց կիրառելիության բարելավման անհրաժեշտությանը:

Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզվել է, որ քոլեջում ռեսուրսների բավարար լինելու վերաբերյալ հարցումների իրականացման հստակ քաղաքականություն և մեխանիզմներ առկա չեն: Այնուամենայնիվ, ուսանողների և դասախոսների հետ քննարկումների արդյունքում ձեռնարկվել են որոշակի բարելավումներ, այդ թվում՝ նոր համակարգիչների ձեռքբերում և ուսանողների համար հանդիպումների դահլիճի տրամադրում, որը նախատեսված է դասախոսությունների, սեմինարների և ուսումնական քննարկումների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջի 2022-2027թթ. ՌԾ-ով նախատեսվում է տեխնոլոգիական հագեցվածությամբ ուսումնական և աշխատանքային միջավայրի ձևավորում, ինչպես նաև ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, որոնք ապահովում են ուսանողների և աշխատակիցների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջն ունի բավարար տարածքային ենթակառուցվածքներ, ներառյալ լսարաններ, մասնագիտական կաբինետներ, արհեստանոցներ, լաբորատորիաներ, գրադարան, սպորտդահլիճ և ճաշարանի համար նախատեսված տարածք, ինչը ապահովում է ուսումնական գործընթացի բազմակողմանի իրականացումը: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ առկա ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է վերանայել և գործնականում կիրառության մեջ դնել չօգտագործվող ռեսուրսները, մասնավորապես՝ կարի արհեստանոցը, ինչպես նաև վերազինել լաբորատորիաները և արհեստանոցները՝ ապահովելով ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացման համապատասխան պայմաններ:

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ քոլեջի գրադարանը ներառում է մասնագիտական գրականություն և համագործակցում է այլ գրադարանների հետ՝ ապահովելով գրքային ռեսուրսների հասանելիությունը ուսանողների և դասախոսների համար: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ գրադարանի ամբողջական թվայնացումը, ինչպես նաև միջազգային գիտական տեղեկատվական ցանցերին անդամակցությունը կարող են նպաստել գիտական և ուսումնագիտական ռեսուրսների հասանելիության ընդլայնմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում ֆինանսական միջոցների բազմազանեցման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացումը,

մասնավորապես՝ կարճաժամկետ դասընթացների կազմակերպումը, կարող է նպաստել քոլեջի ֆինանսական ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ 2023 թվականին ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը զգալիորեն ավելացել են՝ 0.05%-ից հասնելով 4.87%-ի, ինչը վկայում է ռեսուրսների զարգացման ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկման մասին: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ ռեսուրսների բաշխման համակարգի կատարելագործումը և շարունակական գնահատումը թույլ կտան առավել նպատակային ներդրումներ կատարել ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Դրական է նաև այն հանգամանքը, որ քոլեջը դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կարողացել է ձեռք բերել ժամանակակից ՏՀՏ միջոցներ, համակարգչային սարքավորումներ և լաբորատոր սարքավորումներ, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի արդիականացմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ քոլեջն ապահովված է անվտանգության հիմնական պայմաններով, ներառյալ՝ հակահրդեհային համակարգը, տեսանկարահանող սարքերը, պահակակետը և տարհանման պլանները, ինչը նպաստում է ուսումնական միջավայրի անվտանգությանը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անվտանգության մշակույթի ամրապնդման նպատակով անհրաժեշտ է ապահովել անվտանգության կանոնների վերաբերյալ տեսանելի տեղեկատվություն լաբորատորիաներում և արհեստանոցներում:

Փորձագիտական խումբը գնահատում է այն փաստը, որ քոլեջում իրականացվել է ռեսուրսների հասանելիության վերաբերյալ հարցում դասախոսների և ուսանողների շրջանում, ինչը կարևոր նախադրյալ է ռեսուրսների շարունակական գնահատման և բարելավման համար: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ձևավորել հարցումների պարբերական իրականացման հստակ քաղաքականություն և մեխանիզմներ, ինչը թույլ կտա առավել օբյեկտիվորեն գնահատել ուսումնական միջավայրի բարելավման անհրաժեշտությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ուսումնական միջավայր, օգտագործում է նաև գործատուների ռեսուրսները գործնական պարապմունքների իրականացման համար, ֆինանսներ է հատկացնում ենթակառուցվածքների բարելավման ու կրթական ծրագրերի իրականացման կայունության ապահովման նպատակով, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

«ԵՊՏՔ-ի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները» (2024թ.) փաստաթղթի համաձայն ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից Քոլեջի տնօրինությանը և մանկավարժական խորհրդին աշխատակիցների կատարած աշխատանքների ներկայացումը, պաշտոնական կայքէջի հրապարակումները: Այդուհանդերձ, սահմանված ներքին՝ վերևից ներքև հաշվետվողականության ապահովման մեխանիզմները դեռևս ձևավորման փուլում են, մասնավորապես տեսանելի չէ մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններում հաշվետվությունների քննարկումը: Իսկ կայքէջը, որպես արտաքին հաշվետվողականության ապահովման գործիք գտնվում է համալրման փուլում: Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ ԵՊՏՔ-ում հիմնականում գործում է ներքևից վերև հաշվետվողականության համակարգը: Ստորաբաժանումները ներկայացնում են կիսամյակային կամ տարեկան հաշվետվություններ՝ ըստ աստիճանակարգման: Հարկ է նշել, որ հաշվետվողականության գործընթացները ինստիտուցիոնալ մակարդակում համակարգված չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տարեկան և կիսամյակային հաշվետվությունների ներկայացման պահանջը չի տարածվում բոլոր ստորաբաժանումների վրա: Առկա են դեպքեր, երբ որոշ ստորաբաժանումներ, օրինակ՝ կադրային բաժինը, գրադարանը և պրակտիկայի ղեկավարը, ներկայացնում են զեկուցագրեր կամ իրենց իրականացրած աշխատանքները ներկայացնում են բանավոր՝ Մանկավարժական խորհրդի նիստերի ընթացքում: Սակայն, այս գործընթացների արդյունքները բավարար չափով չեն փաստաթղթավորվում: Ներկայացված հաշվետվությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն՝ անդրադառնալով իրականացված գործընթացներին:

Քոլեջն ապահովում է նաև արտաքին հաշվետվողականություն վերադաս մարմիններին. ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են հաշվապահի կողմից, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների հաշվետվությունները՝ կարիերայի պատասխանատուի կողմից, իսկ ներքին գնահատման ամփոփ տեղեկանքը՝ տնօրենի կողմից: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ օրինակ հաշվապահը տարեկան ամփոփ հաշվետվություն չի ներկայացնում քոլեջի որևէ կառավարման օղակում:

Համալիր տվյալների հիման վրա տնօրենը յուրաքանչյուր տարի կազմում է տարեկան հաշվետվություն, որը ներառում է քոլեջի գործունեության արդյունքների ամփոփումը և համարվում է քոլեջի գործունեության վերաբերյալ հիմնական հաշվետու փաստաթուղթը: Ըստ ընթացակարգի, տնօրենի հաշվետվությունը քննարկվում է Կառավարման խորհրդում և Մանկավարժական խորհրդում, սակայն Մանկավարժական խորհրդի 2023-2024 ուստարվա արձանագրություններում տեսանելի չէ տնօրենի հաշվետվության հարցի քննարկումը:

Փորձագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ տնօրենի հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը սահմանափակ է արտահայտվում: Տարբեր տարիների հաշվետվություններում ներկայացվում են հիմնականում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ փաստական տվյալներ, ներառյալ՝ դասավանդողների կազմը, մասնագիտությունները, ուսանողների շարժը, շրջանավարտների ցուցանիշները, բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու վերաբերյալ տվյալները, քոլեջում իրականացված մեթոդական աշխատանքների մասին տեղեկատվությունը, դասալսումների արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև տվյալներ պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Վերոնշյալ տվյալները նույնությամբ ամփոփված են նաև ուսումնամեթոդական գծով փոխտնօրենի հաշվետվությունում: Հարկ է նշել, որ ներկայացված հաշվետվություններում չի ապահովվում ռազմավարական ծրագրի հետ հստակ առնչությունը, ներկայացված չէ ՌԾ-ի կատարողական վերլուծություն:

Քոլեջը որոշակիորեն ապահովում է ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը արտաքին շահակիցներին և հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով սոցիալական մեդիան: Մասնավորապես՝ Facebook-ը, որը համակարգում է դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը, և Instagram-ը՝ համակարգում է ՈՒԽ-ն: Այս հարթակներում հրապարակվում և պարբերաբար թարմացվում է տեղեկատվություն քոլեջի առօրյայի, համագործակցության շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների, թափուր աշխատատեղերի, ինչպես նաև ուսանողների մասնագիտական զբաղվածության և կրթությունը շարունակելու հնարավորությունների վերաբերյալ:

2024-2025 ուստարվանից Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջում ներդրվել է պաշտոնական կայքէջը (eptq.am), որը վարում է համակարգչային օպերատորը: Կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստեղծված բաժինները ամբողջությամբ համալրված չեն տեղեկատվությամբ: Կայքը ստեղծված է հայալեզու տարբերակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կայքէջի դիտելիությունը դեռևս ցածր է, այդուհանդերձ, քոլեջը փորձում է կայքէջը տարածել ներքին շահակիցների շրջանակներում:

2024 թվականին քոլեջը մշակել է «Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը», որտեղ սահմանված են հասարակության հետ արդյունավետ հաղորդակցության ձևավորման նպատակները և մեխանիզմները (մեխանիզմներ կարող են հանդիսանալ հարցումները, ֆոկուս-խմբերը, սեմինարների ժամանակ հնչած կարծիքները, որևիցէ գործընթացի կամ Քոլեջի գործունեության վերաբերյալ կայքի հետադարձ կապով ստացված մեկնաբանությունները, ԶԼՄ-ները և այլն): Հասարակության հետ հետադարձ կապի հիմնական գործիքներն են՝ պաշտոնական կայքէջի և Ֆեյսբուքի նամակագրության բաժինները: Կայքէջի հետադարձ կապի պատուհանը դեռևս պասիվ է, իսկ ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակներով հիմնականում դիմում են կրթական ծրագրերի, ընդունելության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Տարբեր շահակիցների շրջանակներում հարցումներ անցկացնելու պրակտիկան դեռ նոր է ձևավորվում քոլեջում: Հետադարձ կապի ապահովման միջոցների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ ներդրված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից որոշակիորեն կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ, օրինակ՝ ՈՒԽ անդամները հավաքագրել են թափոններ: Այնուամենայնիվ, ուսանողների և դասախոսների մասնակցությամբ հասարակական հիմունքներով միջոցառումները հստակ համակարգված և պարբերական չեն: Քոլեջում ձևավորված է գործատուների հետ համագործակցության արդյունքում ներդրված կարճաժամկետ (եռամսյա) ծրագրերի պարբերաբար իրականացման փորձառություն, որոնցից են՝ «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Ոսկերչություն», «Խոհարարական գործ» կրթական ծրագրերը: Այդուհանդերձ կարճաժամկետ ծրագրերի իրականացումը կախված է գործատուի պահանջից (օրինակ՝ վերապատրաստել «Գազպորմ Արմենիա»-ի մասնագետներին եռակցման աշխատանքներ իրականացնելու համար), քոլեջի նախաձեռնողական չէ ծրագրերի վերաբերյալ իրազեկումներ և դիմորդների հավաքագրում իրականացնելու համար: Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ քոլեջը գործող կարճաժամկետ ծրագրեր չունի: Բացի այդ, քոլեջը իրականացնում է սոցիալական նախագծեր, օրինակ՝ համակարգչային գրագիտության բարձրացումը «Բազմակողմանի աջակցություն Լեռնային Ղարաբաղից փախստականների հրատապ և երկարաժամկետ կարիքների բավարարման համար» ծրագիր շահառուների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում հաշվետվողականության ձևավորման փորձերը: Այնուամենայնիվ, խումբը շեշտադրում է, որ հաշվետվողականության համակարգը թերի է գործում և չի ապահովում կառավարման արդյունավետ վերահսկողություն և թափանցիկություն: Միևնույն ժամանակ, ստորաբաժանումների կողմից ներկայացվող (ներքևից վերև) հաշվետվողականության գործընթացները նույնպես բախվում են կառավարման և համակարգման միասնական մոտեցումների պակասի խնդրին: Սա հանգեցնում է նրան, որ տարբեր ստորաբաժանումներն ամբողջական և համահունչ ձևաչափով չեն հավաքագրում և փոխանցում տվյալները, ինչը կարող է բացթողումների և տեղեկատվական անկատարության պատճառ դառնալ: Միևնույն ժամանակ, վերևից ներքև հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը կարող է հանգեցնել ոչ թափանցիկ կառավարման, ինչը ռիսկեր է ստեղծում տվյալահենք որոշումների ընդունման գործընթացներում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ տնօրենի հաշվետվություններում ներառված են ուսումնական գործընթացի վերաբերյալ փաստական տվյալներ: Այնուամենայնիվ, տնօրենի հաշվետվությունը դեռևս քոլեջի գործունեության բոլոր կողմերը չի արտահայտում, բացակայում է ռազմավարական ծրագրի հետ կապը և խորքային վերլուծությունները, ինչը դժվարացնում է կառավարչական որոշումների արդյունավետության գնահատումը: Հաշվետվությունների նկարագրական լինելը կամ որոշ դեպքերում բանավոր զեկուցումների հիման վրա հաշվետվությունները խոչընդոտում են ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգի զարգացմանը: Փորձագիտական խումբը ընդգծում է հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ներդրման անհրաժեշտությունը, ինչպես հստակ ցուցիչների և միասնական մոտեցումների սահմանումը, թույլ կտա հաշվետվությունների միջոցով վեր հանել տարբեր գործընթացներում քոլեջի առաջընթացը և բարելավման ենթակա կողմերը, նպաստելով տվյալահենք որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում տեղեկատվության տարածման առկա փորձառությունը՝ մասնավորապես ֆեյսբուքյան էջի միջոցով կրթական գործընթացների և միջոցառումների լուսաբանումը: Պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության ոչ ամբողջական լինելը հանգեցնում կայքի դիտելիության ցածր մակարդակի և նվազեցնում է կայքէջի արդյունավետությունը որպես հրապարակայնության և թափանցիկության ապահովման գործիք:

Փորձագիտական խումբը նկատում է, որ տեղեկատվության տարածման միջոցների կիրառությունը և համակարգումը իրականացվում է տարբեր անձանց կողմից, ինչը խոչընդոտում է միասնական համակարգի կառուցմանը: Կիրառվող միջոցների փոխկապակցումը և հրապարակայնության միասնական մոտեցումների կիրառությունը, կնպաստեն վերջիններիս արդյունավետության բարձրացմանը և քոլեջի հասարակական պատասխանատվության ավելի համակարգված դրսևորմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մշակել է հասարակության հետ հետադարձ կապի ապահովման քաղաքականություն՝ սահմանելով մեխանիզմներ: Այնուամենայնիվ, շեշտադրվում է, որ գործնականում այս մեխանիզմները չեն գործում բավարար ակտիվությամբ: Կայքի հետադարձ կապի գործիքը պասիվ է: Քոլեջի կողմից իրականացված հարցումները դեռևս բավարար տեղեկատվություն չեն հավաքագրում հետադարձ կապի արդյունավետության վերլուծության համար: Հետադարձ կապի միջոցների կիրառության արդյունավետության գնահատումը կարևոր նախապայման է կիրառվող գործիքակազմի լավարկման և շահակիցների համար ավելի թափանցիկ գործունեություն ծավալելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը գործատուների հետ համագործակցության արդյունքում իրականացնում է կարճաժամկետ մասնագիտական ծրագրեր: Այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ կարճաժամկետ ծրագրերի իրականացումը ներկայումս սահմանափակվում է գործատուների պահանջով: Ծրագրերի շարունակականության ապահովման համար կարևոր է վերջիններիս վերաբերյալ տեղեկատվության տարածումը, աշխատաշուկայի հետ շարունակական կապը և դիմորդների ներգրավումը, որը կարևոր փորձառություն է քոլեջի համար ֆինանսական միջոցների բազմազանեցման համար: Փորձագիտական խումբը կարևորում է, այն հանգամանքը, որը քոլեջը հիմնական կրթական ծրագրերի և ռեսուրսների բազայի հիման վրա ունի լայն հնարավորություններ զարգացնելու և ընդլայնելու կարճաժամկետ ծրագրերի և մասնագիտական վերապատրաստումների շրջանակները: Աշխատաշուկայի կարիքների համատեքստում նման ծրագրերի ընդլայնումը և դրանց ազդեցության գնահատումը կարող են նպաստել նաև շրջանավարտների մրցունակության բարձրացմանը և կրթական ծրագրերի առավել ճկուն դարձնելուն և քոլեջի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև հասարակական հիմունքներով ծրագրերի իրականացումը, իսկ ուսանողների և դասախոսների ակտիվ ներգրավությունը կարող է նպաստել առավել լայն հանրային ներգրավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ապահովված չէ հաշվետվողականության հստակ համակարգը, հաշվետվությունների կատարումը և գնահատումը ինստիտուցիոնալ պահանջ չի հանդիսանում, հաշվետվությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն՝ առանց վերլուծական բաղադրիչի, ռազմավարական ծրագրի իրականացումը չունի հաշվետվողական հիմքեր, տեղեկատվության հրապարակման մեխանիզմները թերի են գործում, լիովին ապահովված չէ հասանելիությունն ու թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար, հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները թույլ են կիրարկված, գիտելիքների և արժեքների տարածումը ինստիտուցիոնալ չէ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ԵՊՏՔ-ի 2022-2027թթ. գործող ՌԾ-ում արտաքին կապերի և միջազգայնացման վերաբերյալ առանձին նպատակներ կամ առաջնահերթություններ սահմանված չեն: Այնուամենայնիվ, 2024թ. քոլեջը մշակել է «Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն» փաստաթուղթը, որի նպատակն է ինտեգրել համաշխարհային կրթական և մշակութային տարրեր՝ կրթության որակը բարելավելու և քոլեջի հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Փաստաթղթով սահմանվել են

նպատակներ, գործառույթներ և ակնկալվող արդյունքներ, նախատեսվում է միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածքի ստեղծում և պատասխանատու անձի նշանակում: Քոլեջում առանձին ենթակառուցվածք կամ պատասխանատու ստորաբաժանում, որը համակարգում է արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, առկա չէ: Այս ուղղությամբ աշխատանքները հիմնականում կատարվում են տնօրենի կողմից, սակայն առանց հստակեցված պլանավորման: Բացի այդ, փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դեռևս չեն սահմանվել գործընթացների պատասխանատուները, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները:

Քոլեջն ունի համագործակցության լայն շրջանակ ինչպես գործատուների, այնպես էլ ուսումնական հաստատությունների հետ: Պրակտիկաների կազմակերպման, հետազոտական աշխատանքների իրականացման, շարունակական կրթության հնարավորության և շրջանավարտների զբաղվածության նպատակով քոլեջը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է ՀՀ-ում գործող շուրջ 28 տեղական կազմակերպությունների հետ, որոնց թվում են «Ստանդարտ էքսպերտ» ՍՊԸ-ն, «Enal Dent» ատամնատեխնիկական լաբորատորիան, «Պլանետ թրեվլ» տուրիստական գործակալությունը, «Ալֆա-ֆարմ» դեղատների ցանցը, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնը», «Ռիմա թրեվլ» ընկերությունը և այլ գործընկեր կազմակերպություններ: Քոլեջը համագործակցում է նաև ՀՀ-ում գործող մոտ 12 ուսումնական հաստատությունների հետ, այդ թվում՝ Արմավիրի տարածաշրջանի պետական քոլեջի, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության քոլեջի, Հայ-հունական պետական քոլեջի, Եվրասիա միջազգային համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՊՏՀ-ի, ՀԱԱՀ-ի, ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի և այլ ուսումնական հաստատությունների հետ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը տարեցտարի ընդլայնում է իր համագործակցության շրջանակը, ստեղծելով հնարավորություն գործատուների ռեսուրսները ներգրավելու գործնական պարապմունքներում, կազմակերպելու փորձուսուցում բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, ուսանողներին ներգրավելով պրակտիկ աշխատանքներում և ինչպես նաև ապահովելով նրանց համար աշխատանքային առաջարկների հնարավորություններ: Ուսումնական հաստատությունների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, փորձի փոխանակմանը նպաստող հանդիպումներ, ապահովվում են պայմաններ շարունակական կրթության համար: Օրինակ՝ Եվրասիա միջազգային համալսարանը, համաձայն 2022թ. պայմանագրի, պարտավորվում է կազմակերպել ուսումնամեթոդական քննարկումներ, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև ուսումը ԵՄՀ-ում շարունակող յուրաքանչյուր սովորողի համար տրամադրել ուսման վարձի 20% զեղչ: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ աշխատանքները քոլեջը նոր են մեկնարկել:

Քոլեջը համագործակցում է նաև Մասնագիտական կրթության ուսուցման և զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ), «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» ծրագրի և GIZ-ի հետ: Այս համագործակցության շրջանակներում քոլեջի ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են անցնում, մասնակցում են սեմինարներին և աշխատաժողովներին: Միջազգային համագործակցության շրջանակներում քոլեջի ներկայացուցիչները «Մասնագիտական կրթություն և կողմնորոշում» ծրագրի շրջանակներում այցով եղել են Գերմանիայում՝ Լայպցիգում, որտեղ ծանոթացել են Լայպցիգի «Արհեստագործական պալատի» կրթական կենտրոնի գործունեությանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման իրականացման գերմանական մոդելներին և մեթոդներին:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ առկա գործընկերների հետ համագործակցության արդյունքների վերլուծություն և գնահատում քոլեջը չի իրականացրել։

Քոլեջի պաշտոնական կայքի օտարալեզու տարբերակներ առկա չեն։ Օտար լեզուների իմացության վերաբերյալ ինքնավերլուծության տվյալների համաձայն՝ դասավանդողների և վարչական աշխատակիցների 83.7%-ը տիրապետում է անգլերենին, 9.3%-ը՝ ֆրանսերենին, իսկ 100%-ը՝ ռուսերենին, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը լեզվաիմացության թեստավորում չի իրականացրել։ Ուսանողների շրջանում տվյալների վերլուծությունը կատարվել է միայն 1-ին կուրսի ուսանողների հարցման տվյալների հիման վրա, ըստ որի՝ 90%-ից ավել ուսանողները տիրապետում են ռուսերենին կամ անգլերենին։

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջը ձգտում է բարձրացնել ուսանողների և աշխատակիցների օտար լեզվի իմացության մակարդակը։ Այնուամենայնիվ, փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվել է, որ այս գործընթացը չունի հստակ պլանավորում և առկա չեն լրացուցիչ դասընթացներ։ Միաժամանակ, քոլեջի շահակիցները կարևորում են օտար լեզվի իմացությունը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ, չնայած ԵՊՏՔ-ի 2022-2027թթ. ՌԾ-ում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ առանձին նպատակներ չեն սահմանվել, այնուամենայնիվ 2024թ. քոլեջը մշակել է «Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն» փաստաթուղթը, որը կարող է հիմք հանդիսանալ հետագա բարեփոխումների համար։

Խումբը կարևորում է քոլեջի ակտիվ համագործակցությունը տեղական գործատուների և ուսումնական հաստատությունների հետ, ինչը ստեղծում է ուսանողների համար գործնական ուսուցման հնարավորություններ, նրանց ներգրավում պրակտիկ աշխատանքներում և նպաստում հետագա զբաղվածությանը։ Այս համատեքստում, խումբը կարևորում է գործընկերային կապերի առավել համակարգված պլանավորումը, դրանց կառավարման մեխանիզմների բարելավումը, ինչպես նաև համագործակցության արդյունավետության գնահատման համակարգի ձևավորումը, ինչը կնպաստի գործատուների և կրթական հաստատությունների հետ կապերի առավել նպատակային և կայուն զարգացմանը։

Դրական է նաև, որ ուսումնական հաստատությունների հետ ձևավորված համագործակցությունը նպաստում է համատեղ միջոցառումների կազմակերպմանը, փորձի փոխանակման հանդիպումների իրականացմանը և շարունակական կրթության հնարավորությունների ապահովմանը։ Այնուամենայնիվ, խումբը ընդգծում է դրանց կայունության ապահովման, պլանավորման հստակեցման և համագործակցության ձևաչափերի ամրապնդման անհրաժեշտությունը։

Քոլեջի ներգրավվածությունը միջազգային համագործակցային ծրագրերում դիտարկվում է որպես կարևոր նախադրյալ կրթական միջավայրի զարգացման, ուսանողների և աշխատակիցների ակադեմիական ու մասնագիտական կարողությունների ընդլայնման համար։ Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել միջազգային գործընկերների հետ ավելի ընդարձակ և երկարաժամկետ համագործակցություն՝ համակարգված ռազմավարության շրջանակներում, ինչը հնարավորություն կտա ուսանողներին և դասախոսական կազմին մասնակցել միջազգային ակադեմիական փոխանակումներին, գիտական ծրագրերին և համատեղ հետազոտական նախագծերին։

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի պաշտոնական կայքում օտարալեզու տարբերակների առկայությունը հնարավորություն կտա բարձրացնել հաստատության միջազգային տեսանելիությունը, խթանել օտարերկրյա գործընկերների հետ

համագործակցության հնարավորությունները և ապահովել տեղեկատվության մատչելիությունը միջազգային ակադեմիական ու գործատու կառույցների համար՝ նպաստելով միջազգայնացման գործընթացի առավել արդյունավետ զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների մշակումն ու իրականացումը: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ ուսանողները, թե՛ դասավանդողները և վարչական աշխատակիցները հիմնականում տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի: Սակայն օտար լեզվի ուսուցման գործընթացը չի հիմնվում հստակ ծրագրային մոտեցման վրա, և ներկայումս չի իրականացվում կազմակերպված վերապատրաստում կամ լրացուցիչ դասընթացներ: Խումբը կարևորում է օտար լեզվի ուսուցման համակարգված ծրագրերի մշակումը, որոնք կխթանեն ուսանողների և աշխատակիցների մասնագիտական զարգացման հնարավորությունները և կնպաստեն քոլեջի միջազգայնացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը ձևավորել է կայուն արտաքին կապերի շրջանակ, ակտիվորեն համագործակցում է տեղական գործատուների և ուսումնական հաստատությունների հետ՝ համատեղ ռեսուրսների օգտագործման և ուսանողների գործնական հմտությունների զարգացման նպատակով, ինչպես նաև ունի միջազգային գործընկերների հետ համագործակցության փորձառություն, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ԵՊՏՔ-ի որակի ապահովման խնդիրները սահմանված են հաստատության 2022-2027թթ. ՌԾ-ում, որի նպատակն է կատարելագործել և ամրապնդել ներքին որակի ապահովման համակարգը՝ համապատասխանեցնելով այն եվրոպական չափանիշներին: Այս նպատակին համահունչ՝ 2024թ. հաստատվել է «Որակի ապահովման քաղաքականություն» փաստաթուղթը, որը սահմանում է որակի ապահովման հիմնական նպատակները, այդ թվում՝ կրթական ծրագրերի համապատասխանեցումը ՊԿՉ-ներին, դասավանդման և ուսուցման որակի ապահովումը, շնորհվող որակավորումների համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակին և այլն: Այնուամենայնիվ, փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցը ցույց են տվել, փաստաթղթերում հստակ սահմանված չեն որակի ապահովման հիմնական խնդիրները, սկզբունքները, ներքին գնահատման մեխանիզմները, ինչպես նաև շահակիցների դերակատարումը որակի ապահովման գործընթացներում:

Քոլեջում որակի ներքին ապահովման գործընթացների համար առանձին ենթակառուցվածք կամ պատասխանատու անձ առկա չէ, ինչպես նաև բացակայում է որակի ապահովման գործընթացների իրականացման հստակ պլանը: Փորձագիտական

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քոլեջում որակի ապահովման աշխատանքները հիմնականում մեկնարկել են ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում՝ ինքնավերլուծության գործընթացի հետ զուգահեռ: Ներկայումս որակի ներքին ապահովման պատասխանատվությունը իրականացվում է ուսումնական գծով փոխտնօրենի և մեթոդիստի կողմից՝ հասարակական հիմունքներով: Ներքին որակի ապահովման ընդհանուր վերահսկողությունն ու համակարգումը իրականացնում է քոլեջի տնօրենը: Հաստատությունը նախատեսում է ապագայում նշանակել որակի ապահովման առանձին պատասխանատու:

Քոլեջում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների իրականացման համար առկա են որոշակի մեխանիզմներ: Ամբիոններում պարբերաբար քննարկվում են մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման հարցերը, որոնց շրջանակներում հավաքագրվում են տվյալներ՝ դասալսումների և գործատուների հետ շփումների միջոցով: Կարիերայի կենտրոնը իրականացնում է շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրում: Չնայած տվյալների հավաքագրման այս ձևերին, դրանց պլանավորված և համակարգված մոտեցումը բացակայում է: Ինքնավերլուծության գործընթացների շրջանակներում 2024թ. քոլեջում անցկացվել են հարցումներ: Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են ուսանողների հարցումներ՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով, որոնք վերաբերում էին մասնագիտական կրթական ծրագրերից, հետազոտական աշխատանքներից և ռեսուրսներից բավարարվածությանը:

Դասախոսների շրջանում հարցումները կենտրոնացած էին անգլերեն լեզվի իմացության, տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման և ռեսուրսների բավարարության գնահատման վրա: Սակայն հարցումների արդյունքները ներկայացված են միայն թվային ձևաչափով և չեն ներառում համապարփակ վերլուծություն: Փորձագիտական այցի արդյունքները ցույց են տվել, որ քոլեջում որոշ փոփոխություններ իրականացվում են հավաքագրված տվյալների հիման վրա, մասնավորապես՝ ռեսուրսների բարելավման ուղղությամբ, սակայն տվյալների հավաքագրման և օգտագործման գործընթացները հիմնականում իրականացվում են իրավիճակային մոտեցմամբ: Բացի այդ, քոլեջը դեռևս չի իրականացրել հարցումների արդյունավետության գնահատում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները քննարկվում են ԿԽ-ում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև քոլեջի դասախոսներն ու ուսանողները մասնակիորեն ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, այս ներգրավվածությունը հիմնականում իրականացվել է ինքնավերլուծության գործընթացների շրջանակներում: Արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակվում է Կառավարման խորհրդում մասնակցությամբ, և նրանց համար որակի ապահովման գործընթացներում ակտիվ դերակատարություն նախատեսված չէ:

Քոլեջի կողմից որակի արտաքին գնահատման նպատակով կազմված ինքնավերլուծությունը հիմնականում նկարագրական բնույթ ունի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինքնավերլուծությունը տարածվել է ներքին շահակիցների շրջանում, քոլեջի կողմից կազմակերպվել են հանդիպումներ, որոնք նվիրված էին ինքնավերլուծության քննարկմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵՊՏՔ-ի 2022-2027թթ. ՌԾ-ում սահմանված է ներքին որակի ապահովման համակարգի կատարելագործման և ամրապնդման նպատակադրումը, որի շրջանակներում հաստատվել է փաստաթուղթ, ինչը կարող է ապահովել որակի ապահովման ռազմավարական մոտեցման ձևավորումը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է հստակեցնել որակի ապահովման հիմնական խնդիրները, սկզբունքները, ներքին գնահատման մեխանիզմները, ինչպես նաև

շահակիցների դերակատարումը, ինչը կնպաստի որակի ներքին ապահովման համակարգի ավելի համակարգված, կանխատեսելի և շարունակական գործարկմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման գործընթացների համակարգումն ուսումնական գծով փոխտնօրենի և մեթոդիստի կողմից ապահովում է հաստատությունում որակի վերահսկման նախնական գործառույթների իրականացումը: Այնուամենայնիվ, այս իրավիճակը կարող է հանգեցնել շահերի բախման, քանի որ նշված անձինք միաժամանակ ներգրավված են միաժամանակ կրթական գործընթացների կազմակերպման և գնահատման աշխատանքներում: Ուստի անհրաժեշտ է ստեղծել առանձին ենթակառուցվածք կամ նշանակել որակի ապահովման անկախ պատասխանատու անձ, ինչը կնպաստի որակի ապահովման գործընթացների առավել համակարգված կազմակերպմանը, շարունակական բարելավմանը և հաստատության որակի մշակույթի ձևավորման մեկնարկին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման միջոցառումների իրականացման հստակ պլանի առկայությունը, հնարավորություն կտա քոլեջին ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել որակի ապահովման գործընթացները, ինչպես նաև կնպաստի համակարգի ինքնագնահատմանը և շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման քննարկումներ ամբիոններում, ինչպես նաև տվյալներ են հավաքագրվում դասալսումների և գործատուների հետ շփումների միջոցով: Միևնույն ժամանակ, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ որոշակի տվյալների հավաքագրում: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ տվյալների հավաքագրման և օգտագործման գործընթացները կրում են իրավիճակային բնույթ և չունեն պլանավորված և համակարգված մոտեցում, ինչը սահմանափակում է դրանց արդյունավետ կիրառումը: Համակարգված մեխանիզմների ներդրումը կնպաստի տվյալների նպատակային վերլուծությանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում իրականացվել են ուսանողների և դասախոսների շրջանում հարցումներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի վերաբերյալ հետադարձ կապի ստացման հնարավորություն: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել հարցումների արդյունքների ամբողջական վերլուծությունը և դրանց հիման վրա համապատասխան գործողությունների պլանավորումը, ինչը կնպաստի որակի ապահովման վրա հիմնված որոշումների կայացման գործընթացի արդյունավետությանը:

Փորձագիտական խումբը կարևորում է շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում՝ որպես կրթական ծրագրերի շարունակական զարգացման և բարելավման նախադրյալ: Խումբը դրական է գնահատում, որ որոշ քայլեր են իրականացվել դասախոսներին և ուսանողներին որակի ապահովման գործընթացներում ներգրավելու ուղղությամբ, ինչը հիմք է ստեղծում ներքին շահակիցների մասնակցության ապահովման համար: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ ապահովելով նրանց ավելի համակարգված և ակտիվ մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում, ինչը կնպաստի կրթական ծրագրերի առավել նպատակային բարելավմանը և աշխատաշուկայի պահանջների ավելի ճշգրիտ վերլուծությանը:

Փորձագիտական խումբը կարևորում է որակի ապահովման գործընթացների թափանցիկությունն ու շահակիցների համար հասանելի տեղեկատվության ապահովումը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ անհրաժեշտ է հրապարակել որակի ապահովման գործընթացներին առնչվող տեղեկատվությունը, ինչը կնպաստի շահակիցների տեղեկացվածության բարձրացմանն ու որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի մշակույթը քոլեջում դեռևս ձևավորված չէ, որակի ներքին ապահովման գործընթացների համար անհրաժեշտ ռեսուրսներ չեն տրամադրվում, ներքին և արտաքին շահակիցների դերակատարությունները հստակ տարանջատված չեն, ինչպես նաև որակի ապահովման ներքին համակարգը չի ապահովում քոլեջի գործունեության թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Փորձագիտական խմբի ղեկավար
Ասյա Սիմոնյան

Ապրիլի 10, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Ասյա Սիմոնյան՝** 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005- 2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում: 2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:
2. **Նաիրա Հունանյան՝** 2002թ-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության բակալավրի ծրագիրը գերազանցության դիպլոմով, 2004թ-ին ավարտել է նույն համալսարանի կենսաբանության մագիստրոսական ծրագիրը՝ կրկին գերազանցության դիպլոմով: 2013թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Կենսաքիմիա, մոլեկուլային կենսաբանություն և ֆիզիոլոգիա» ոլորտում և ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: 2004-2008թթ. աշխատել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի բժշկական կենսաբանության միջազգային հետբուհական կենտրոնում որպես կրտսեր գիտաշխատող, 2006-2007թթ. եղել է Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) բջջաբանության և հյուսվածաբանության դեպարտամենտի կրտսեր մասնագետ, 2013թ-ին դասախոսել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, 2017-2024թթ. աշխատել է Ավանդական բժշկության համալսարանում որպես ամբիոնի վարիչ և դասախոս: 2022թ-ից ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող է, ինչպես նաև դասավանդում է Մխիթար Գոշ Հայ-Ռուսական միջազգային համալսարանում և Ավանդական բժշկության համալսարանում: Հրատարակել է բազմաթիվ գիտական հոդվածներ հիմնականում հարթ մկանների ֆիզիոլոգիայի բնագավառում: 2005թ. արժանացել է ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամի (CRDF) գիտական մրցանակի:

3. **Ցասման Ավագյան՝** 2001թ-ին ավարտել է Արցախի պետական համալսարանի «Քիմիա» մասնագիտության բակալավրի ծրագիրը, 2003թ-ին ավարտել է մագիստրատուրան, այնուհետև 2006թ-ին ավարտել է ասպիրանտուրան կենսաբանական քիմիայի ոլորտում: 2003-2004թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում, 2004թ-ից մինչև 2013թ. դասավանդել է Ստեփանակերտի թիվ 7 դպրոցում, 2010-2013թթ. աշխատել է Արցախի գիտական կենտրոնում որպես լաբորանտ, 2013թ-ից դասախոսում է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի քիմիայի ամբիոնում, 2017թ-ից հանդիսացել է քիմիա-կենսաբանության ամբիոնի վարիչ, 2018թ-ից՝ ռազմավարական գծով պրոռեկտոր, 2019-2023թթ. եղել է նույն համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2023թ-ից աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ որպես որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ: 2018թ. ստացել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պատվոգիր, 2021թ. արժանացել է «Նարեկացի» կրթագիտական մեդալի:
4. **Արևիկ Հովհաննիսյան՝** 2022թ. սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 2-րդ կուրսում: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող–փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	10.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:50	12:30	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	13:50	14:40	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

N.	11.12.2024 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:40	12:30	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ կազմակերպում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	12:40	13:30	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:40	14:30	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն»,«Հաշվապահական հաշվառում», «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ կազմակերպում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ			14:40	15:30	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» մասնագիտության կրթական	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական	Զուգահեռ հանդիպում «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ կազմակերպում»	15:40	16:30	50 րոպե

	ծրագրերի դասախոսների հետ	ծրագրի դասախոսների հետ	մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ			
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի կենտրոնի պատասխանատու, Պրակտիկայի վարիչ, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժնի վարիչ, Արխիվավար, Մեթոդիստ, Լաբորանտների, Արհեստանոցի վարիչների) ղեկավարների հետ			16:40	17:50	70 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			18:00	18:30	30 րոպե

N.	12.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Բաց հանդիպում	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:30	190 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ ՌԾ /առկայության դեպքում/	1
2.	Ներկայացնել վերջին տարիների տնօրենի տարեկան հաշվետվությունները	2
3.	Բոլոր խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
4.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
5.	Պաշտոնների անձնագրեր /բոլորը/	2
6.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերի արձանագրություններ	2
7.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ /վերջին տարիների/	2
8.	Ստորաբաժանումների հաշվետվություններ /վերջին տարիների/	2
9.	Ֆինանսական միջոցների /եկամուտների և ծախսերի/ բաշխումը արտահայտված տոկոսներով ըստ բյուջեի հոդվածների /վերջին 3 տարիների/	2
10.	Դասախոսների փաթեթներ /3 ՄԿԾ-ների/	3
11.	Պրակտիկայի լրացված օրինակներ /3 ՄԿԾ-ների/ վերջին 2-3 տարի	3
12.	Դիպլոմային աշխատանքների օրինակներ	3
13.	Կարճաժամկետ ծրագրերի ցանկ	3
14.	Խորհրդատվական պարապմունքների ժամանակացույց	4
15.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
16.	ՈւԽ կանոնակարգ	4
17.	ՈւԽ հաշվետվություններ	4
18.	ՈւԽ աշխատանքային պլան	4
19.	Ուսանողների մասնակցությամբ միջոցառումների ցանկ	4
20.	Կարիերայի պատասխանատուի հաշվետվություն	4
21.	Դասալսման լրացված ձևաթղթեր և դրանց վերլուծությունները	5
22.	Դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց	5
23.	Մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների ցանկ և վերապատրաստման թեմաներ	5
24.	Ռեֆերատների օրինակներ /3 ՄԿԾ-ներից/	6
25.	Ուսանողներին տրվող ինքնուրույն աշխատանքների օրինակներ /եթե առկա է/	6
26.	Դասախոսների կողմից մշակված ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ	6
27.	Դասախոսների կողմից տպագրված աշխատանքների /հոդվածների/ ցանկ վերջին 5 տարիներ	6
28.	Հաստիքացուցակ	7
29.	Համագործակցությունների պայմանագրեր և հուշագրեր / ուսումնական բազաներ, պրակտիկա, շարունակական կրթություն, համագործակցություն և այլն/	9
30.	Շահակիցների շրջանում անցկացված հարցումներ և դրանց որոշ վերլուծություններ	10
31.	Հարցումների լրացված օրինակներ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Առարկայական կաբինետներ
- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Մարզադահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ